Հավելված N 7
ՀՀ կառավարության 2017 թ.
հուլիսի 6-ի նիստի N 29
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյումրի 2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

I. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ 7

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

III. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 9

3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 9
3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ 11
3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ 13
3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ 15
3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 16
3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 19
3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 21
3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ 23
3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 27
3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ 29
3.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ 32
3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 34

IV. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 36

V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40

5.1 ՏԵՍԼԱԿԱՆ 40
5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40
5.3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 41

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 44

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 49

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ 51

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 53

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 56

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ 11
Աղյուսակ 2. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի, 2015թ. 15
Աղյուսակ 3. ՀՀ Շիրակի մարզի պատմամշակութային կենտրոններ 15
Աղյուսակ 4. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը 16
Աղյուսակ 5. Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշներ 22
Աղյուսակ 6. Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում, 2009-2014թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ) 25
Աղյուսակ 7. Գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2009-2015թթ.(ՀՀ մլրդ դրամ) 254
Աղյուսակ 8. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով (2009), 2009-2015թթ. (ՀՀ դրամ) 26
Աղյուսակ 9. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, (մ^2) 29
Աղյուսակ 10. Աղքատության մակարդակը 30
Աղյուսակ 11. ՀՀ Շիրակի մարզի առողջության առաջնային պահպանման օղակում գրանցված հաճախումների համեմատական տվյալներ ՀՀ Լոռու մարզի հետ, մարդ 31
Աղյուսակ 12. 2011-2015թթ. արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի համեմատական բնութագիրը 32
Աղյուսակ 13. ՀՀ Շիրակի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ 40
Աղյուսակ 14. ՀՀ Շիրակի մարզի գերակայություններ 44
Աղյուսակ 15. Ռազմավարական ծրագրեր 49

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, մարդ 11
Գծապատկեր 2. ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները 12
Գծապատկեր 3. Մշտական բնակչությունն ըստ սեռի և տարիքային խմբերի (%), 2016թ. տարեսկզբին 12
Գծապատկեր 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ծավալները 15
Գծապատկեր 5. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2009-2015թթ. 19
Գծապատկեր 6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը 2009-2015թթ. և Հայաստանի ՀՆԱ-ի մարզային մասնաբաժինները, 2015թ. 19
Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրներն ըստ մարզերի և Երևան քաղաքի 2015 թվականին (մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ) 20
Գծապատկեր 8. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների 20
Գծապատկեր 9. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով 2009-2015թթ., դրամ 21
Գծապատկեր 10. Գործազրկության մակարդակը, (%) 22
Գծապատկեր 11. Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն ըստ մարզերի 23
Գծապատկեր 12. Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, (ՀՀ մլն.դրամ) 24
Գծապատկեր 13. Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, (%) 24
Գծապատկեր 14. 2013-2015 թվականներին մարզային ենթակայության բժշկական կազմակերպություններ ում աշխատողների թվաքանակը և մահճակալների քանակը 30
Գծապատկեր 15. Այլ եկամուտների 2014-2016թթ. դինամիկան ունի հետևյալ պատկերը 31

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԶՀ	Համայնքային զարգացման հիմնադրամ
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՀ	Տարածքային զարգացման հիմնադրամ
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ
ՈՒԹՀՍ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ և սպառնալիքներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ԳՏՏԿ	Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն
ԳՏԿ	Գյումրիի Տեխնոլոգիական Կենտրոն
ՏՀՏ	Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներ
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՀԿՏՀ	Համայնքային Կառավարման Տեղեկատվական Համակարգ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի ուղերձը Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության կապակցությամբ

ՀՀ Շիրակի մարզը եղել և այժմ էլ համարվում է Հայաստանի ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող վարչատարածքային միավորներից մեկը: Մարզն այսօր կարիք ունի կենտրոնական կառավարման մարմինների առավել ուշադրությանն ու աջակցությանը, և տրամաբանական է, որ մարզի հիմնախնդիրների լուծման գործընթացը մշտապես գտնվում է առաջին հերթին հենց Հայաստանի Հանրապետության Նախագահի ուշադրության կենտրոնում: Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված միջոցառումների ժամանակացույցում ներառվել էին նաև ՀՀ Շիրակի մարզի մի շարք համայնքներում Հանրապետության Նախագահի նախընտրական հանդիպումների ժամանակ արծարծված հիմնախնդիրները, որոնց մեծ մասն արդեն լուծում են ստացել, իսկ մյուս մասն ընդգրկված է ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության ծրագրում:

ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության և Հայաստանի Հանրապետության 2016-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության հիմնական գերակայություններին:

Կարծում ենք՝ այն կնպաստի ՀՀ Շիրակի մարզի 79 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ Շիրակի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի առավել զարգացած տարածքներից մեկը:

Ծրագիրը կազմվել է մարզային զարգացման հանձնաժողովի կողմից, ոլորտային աշխատանքային խմբերում ընդգրկվել են հմուտ և փորձառու մասնագետներ, որոնց աշխատանքի արդյունքում էլ կազմվել է մարզի համար կարևոր նշանակություն ունեցող այս փաստաթուղթը: Ծրագրի կազմման աշխատանքների համակարգման գործում զգալի է եղել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության դերը: Ոլորտային խնդիրների ճիշտ ձևակերպումներին և մարզի զարգացման ռազմավարության ծրագրում դրանց ընդգրկմանը նպաստել է համագործակցությունը ճյուղային նախարարությունների, հանրապետական գործադիր և պետական կառավարման, հասարակական կազմակերպությունների և այլ մարմինների հետ:

ՀՀ Շիրակի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարության ծրագիրը մարզում նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Շիրակի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն ՀՀ Շիրակի մարզի կայուն զարգացման:

Շիրակի մարզպետարանի անունից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ռազմավարական ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, մարզային ռազմավարության ծրագրի հանձնաժողովին, ոլորտային աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց:

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ **Արթուր Խաչատրյան**

Ի. ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ճանաչել է տարածքային զարգացման կարևորությունը և այս ուղղությամբ շարունակական երկխոսություն է վարել ԵՄ-ի հետ՝ 2000թ.-ից սկսած: 2003թ.-ից սկսած՝ տնտեսական զարգացումն ու աշխատատեղերի ստեղծումն առաջնահերթ են համարվել մի շարք գերակա փաստաթղթերով, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի <<Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 994-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի <<Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> N 1207-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի << Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442 - Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշմամբ:

2. Հայաստանն այսօր բնութագրվում է որպես զարգացման մարտահրավերներով, աշխարհագրաքաղաքական սահմանափակումներով, էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող, միջինից ցածր եկամուտ ապահովող երկիր: 2008թ.-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքով տեղի ունեցած բացասական գործընթացները հանգեցրել են աղքատության ու գործազրկության մակարդակների զգալի բարձրացմանը, խորացրել հասարակության խոցելի խմբերի մարգինալացումը: Արտագաղթն ու փոխանցումներն արտասահմանից միայն մասամբ են կարողանում մեղմել ստեղծված իրավիճակը:

3. Քաղաքականության տեսանկյունից հիմնական մարտահրավերներից է տարածքային զարգացման համակողմանի ռազմավարության մշակումն ու իրականացումը և 2018-2020թթ. տարածքային զարգացման առաջին գործառնական ծրագրի առաջադրումը, որի մեջ կարտացոլվեն այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև առկա անհամաչափությունները մեղմելու համար: Բացի այդ, անհրաժեշտ է համակողմանիորեն համապատասխանեցնել տարբեր նախարարությունների տարածքային զարգացմանն առնչվող քաղաքականությունները, որոնք առաջին հերթին վերաբերում են գյուղատնտեսության ու գյուղական տարածքների զարգացմանը, տեղական ֆինանսական միջոցների կառավարմանը, տեղական ենթակառուցվածքների, տնտեսական զարգացման, զբաղվածության և մասնագիտական կրթության ոլորտներին: Միջնաժամկետ հատվածում, տարածական ու ոլորտային հեռանկարներով հանդերձ, միայն համակարգված միջամտությունը կարող է հանգեցնել տարածքների սոցիալ-տնտեսական իրական և հարատև զարգացմանը:

4. Ապացույցների վրա հիմնված և արդյունքների վրա կենտրոնացող տարածքային զարգացման քաղաքականության մշակման և առաջընթացի անխափան չափման նպատակով՝ անհրաժեշտ է ունենալ մշտադիտարկման ու գնահատման ցուցանիշների հետևողական կազմ:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը սահմանում է երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ ՀՀ Շիրակի մարզում՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն բխում է ազգային ռազմավարական ծրագրի պահանջներից և մասնակցային եղանակով ներգրավում է բոլոր շահագրգիռ կողմերին:

6. ՀՀ Շիրակի մարզի **տեսլականն է՝** լինել *Հայաստանի Հանրապետության առաջատար մարզ, ապահովելով համայնքներում կայուն սոցիալ-տնտեսական հնարավորություններ, ունենալ մրցունակ տնտեսություն և զբաղվածության բարձր մակարդակ:*

7. Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար ռազմավարական չափորոշիչներն են՝

1) Բարձրացնել ՀՀ Շիրակի մարզի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել տնտեսությունը՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, **2025թ.-ի դրությամբ** միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակի, ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի և ակտիվ կազմակերպությունների աճ առնվազն 10%-ով՝ համեմատած 2015թ.-ի հետ: **2025թ.-ի դրությամբ** ՀՀ Շիրակի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը:

2) Մարզի շարունակական, համապարփակ ու կայուն տնտեսական աճ և համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքներին, եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացում և մինչև **2025 թվականը** 10%-ային կետով աղքատության մակարդակի նվազեցում:

3) Մարզային զարգացման քաղաքականության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում ու մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում՝ մինչ **2025 թվականը** մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 11-15 համայնքապետարաններով, 2016թ.-ի 79-ի փոխարեն:

8. Տարածքային զարգացումը ՀՀ Շիրակի մարզում կկենտրոնանա երեք կարևոր գերակայությունների վրա, դրանք են՝ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում, գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում, փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում: Նշված նպատակներին զուգահեռ կսահմանվեն նաև հորիզոնական նպատակներ՝ հավասարությունը և խտրականության բացառումը, շրջակա միջավայրի պահպանությունն ու էներգաարդյունավետությունը և մրցակցության պաշտպանությունը:

9. Մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի և կգնահատվի՝ համաձայն հետևյալ սկզբունքների.

1) պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ,

2) ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում,

3) ՄԶՌ-ների վերանայում և գնահատում:

III. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10. ՀՀ Շիրակի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիայի Հանրապետությանը, հյուսիսից՝ Վրաստանի Հանրապետությանը, արևելքից սահմանակից է ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին: Արտաքին սահմանների երկարությունը կազմում է 165 կմ:

Համայնքների թիվը՝ 79
Բնակավայրեր՝ 131
քաղաքային՝ 3
գյուղական՝ 128
Սահմանամերձ՝ 15
Լեռնային՝ 47
Բարձր լեռնային՝ 39
Վրաստանի հետ սահմանի երկարություն՝ 48 կմ
Թուրքիայի հետ սահմանի երկարություն՝ 117 կմ
Տարածաշրջաններ՝
Ախուրյան
Արթիկ
Անի
Աշոցք
Ամասիա
Քաղաքներ՝
Գյումրի
Արթիկ
Մարալիկ
Մարզկենտրոն ք.Գյումրի

11. Մարզը զբաղեցնում է 2680 կմ^2 տարածք (268 027.026հա), Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը 9.0% է:

12. Գյումրի քաղաքը իր նշանակությամբ և բնակչության թվով համարվում է Հայաստանի Հանրապետության երկրորդ քաղաքը: Մարզի կենտրոնական և հարավային հատվածում տարածվում է Շիրակի դաշտը, իսկ հյուսիսային շրջանում՝ Աշոցքի սարահարթը, միաժամանակ ՀՀ Շիրակի մարզում են տարածվում Փամբակ և Բազում լեռնաշղթաների, ինչպես նաև Եղնախաղ, Ջավախք և Արագած լեռնազանգվածների մի մասը:

13. Ռելիեֆի առումով բաժանվում է երկու մասի: Հրաբխային, որն ընդգրկում է Ջավախք-Աշոցքի տարածաշրջանը՝ իր մեջ ընդգրկելով Ջավախքի և Եղնախաղի լեռնավահանները, Չլդրի լեռները և Աշոցքի սարահարթը, մյուս մասն իր մեջ ներառում է Շիրակի ծալքաբեկորավոր լեռնաշղթան ու Շիրակի դաշտը:

14. Մարզի տարածքով հոսող խոշոր և Հայաստանի Հանրապետության ամենաերկար գետը Ախուրյանն է: Մարզի տարածքում են գտնվում Ախուրյանի համակարգին պատկանող Ցողամարգ, Իլլի, Կարկաչան գետակները:

15. Կլիմայական պայմանների առումով մարզում տիրապետում է բարեխառն լեռնային կլիման, աչքի է ընկնում տեղումների առատությամբ (700 մմ), զով ամառներով, խստաշունչ ու տևական ձմեռներով, հունվարյան միջին ջերմաստիճանը -9.8°C է: Մարզը, լինելով ծովի մակերևույթից 1500-2000 մ բարձրության վրա (մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից 1500-1700 մ, իսկ 55-ը՝ 2000մ բարձրության վրա), հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանը օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է -46^{0}C-ի:

16.Մարզի տարածքում է գտնվում Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն.մ^3 ծավալով խոշորագույնն է հանրապետությունում, ինչպես նաև Արփի լիճ-ջրամբարը, Մանթաշի ջրամբարը: Շիրակի դաշտում ստեղծված է հզոր ոռոգման համակարգ, որը բաղկացած է տարբեր մեծության 9 ջրամբարներից (ընդհանուր տարողությունն է՝ 673.1 մլն/մ^3), 163.9 կմ երկարությամբ մայր ջրանցքից, 300.1 կմ երկարությամբ միջհամայնքային ջրանցքներից, ինչպես նաև ներհամայնքային ջրատարներից ու ոռոգման ցանցերից: Այդ ամենը հնարավորություն է տալիս ոռոգելու 29.1 հազ.հա հողատարածություն:

17.Ներկայումս օգտագործվում են տուֆ (պաշարներով հանրապետության մարզերի մեջ գրավում է առաջին տեղը), պեմզա (պաշար 100 մլն մ^3), բազալտ, պեռլիտ, կապի և ավազի պաշարներ:

18.Մարզի սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 210 939.7 հա, որը կազմում է մարզի ընդհանուր տարածքի 78.7%-ը և հանրապետության գյուղատնտեսական հողերի 10.31%: Դրանց մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը (53.16%) և վարելահողերը (37.05%): [http://www.armstat.am/file/article/armenia_2016_16.pdf]:

19.Բնակավայրերի հողերը կազմում են 16 346.94 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 23 251.50 հա, ջրային հողերը՝ 3 781.67 հա:

20. Մարզի անտառային հողերը կազմում են 4 405.3 հա, որը մարզի ընդհանուր տարածքի 1.64%-ն է, որը խիստ անհամարժեք է հանրապետության միջին ցուցանիշին՝ (11.2%): Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: ՀՀ Շիրակի մարզում բնական էկոհամակարգերում զգալի տարածում ունեն հետևյալ ուտելի, համեմունքային և դեղատու բույսերը՝ եղինջ երկտուն, ավելուկ գանգուր, ուրց անդրկովկասյանը, ուրցադաղձը, մարիամ խոտը, անանուխը (դաղձ դաշտային), մարգագետնային սինձը, սինձ հացազգիատերևը, խատուտիկ դեղատու, արյունխմիկ դեղատու, հազարատերևուկ հատվածատերև և այլն, իսկ հատապտղավորներից մեծ տարածում ունի մասրենին: Աշոցքի սարահարթում գրանցված են կաթնասունների դասի 6 կարգերի 38 ներկայացուցիչներ, որոնք ընդգրկում են միջատակերերի՝ 7, չղջիկների՝ 8, կրծողների՝ 11, նապաստակի՝ 1, գիշատիչների՝ 9 և սմբակավորների՝ 2 տեսակներ:

21.Պետական սահմանից այն կողմ, Թուրքիայի տարածքում, ընդամենը մի քանի կիլոմետրի վրա երևում են Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները:

22. Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին: Աշխարհագրական դիրքի առանձնահատկություններից է նաև այն, որ Վրաստանի տարածքը՝ ՀՀ Շիրակի մարզին հարող պետական սահմանի ամբողջ երկայնքով հիմնականում հայաբնակ է:

23. Մարզի զարգացման խոչընդոտներից է համարվում երկարատև, ցուրտ ձմեռը և բարձր լեռնային գոտիներում գտնվելը: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողատարածքների մոտ 40%-ը ունեն տարբեր աստիճանի էռոզացվածություն, որը բացատրվում է ինչպես բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, այնպես էլ հողերի ոչհամակարգված օգտագործմամբ: Արթիկի տարածաշրջանում կա ջրային ռեսուրսների սահմանափակում: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների պատճառով առանձին տարածաշրջաններում՝ Աշոցքի, Ամասիայի վարելահողերը օգտագործվում են ոչ արդյունավետ:

24. **Սեյսմիկ պայմաններ:** Ախուրյանի տարածաշրջանի ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից (համեմատած հանրապետության տարածքի հետ) գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: Գյումրի քաղաքը գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին:

25. Բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժները, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, սահքերն ու երաշտները:

3.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

26. ՀՀ Շիրակի մարզի մշտական բնակչությունը կազմում է 243 200 մարդ (2016թ. հունվարի 1-ի դրությամբ), որից քաղաքային՝ 142 000 մարդ (58.4%), գյուղական՝ 101 200 մարդ (41.6%): Մարզի բնակչությունը կազմում է հանրապետության բնակչության 8.1%-ը: Ազգաբնակչության 99.1%-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում ռուսներ, եզդիներ, ուկրաինացիներ, ասորիներ և այլն: Հայաստանի բնակչության խտությունը 2016թ-ի դրությամբ մեկ քառակուսի կիլոմետրի վրա կազմում է 101 մարդ *(հաշվարկված է մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով)*:

Աղյուսակ 1. Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ

	2012	2013	2014	2015	2016
Ամբողջ բնակչությունը					
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	3,021.4	3,026.9	3,017.1	3,010.6	2,998.6
ՀՀ Շիրակի մարզ	**252.1**	**251.3**	**248.3**	**246.4**	**243.2**
ՀՀ Լոռու մարզ	235.6	234.7	230.8	228.0	225.0
Քաղաքային բնակչություն					
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1,912.7	1,917.5	1,914.1	1,912.9	1,907.0
ՀՀ Շիրակի մարզ	**146.9**	**146.3**	**144.5**	**143.5**	**142.0**
ՀՀ Լոռու մարզ	137.8	137.2	135.5	134.3	132.8
Գյուղական բնակչություն					
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1,108.7	1,109.4	1,103.0	1,097.7	1,091.6
ՀՀ Շիրակի մարզ	**105.2**	**105.0**	**103.8**	**102.9**	**101.2**
ՀՀ Լոռու մարզ	97.8	97.5	95.3	93.7	92.2

Աղբյուրը՝ http://www.armstat.am/file/article/marz_2016_8.pdf

27. ՀՀ Շիրակի մարզի բնակչության խտությունը կազմում է 91 մարդ/կմ2, որը 2012 թվականի համեմատ նվազել է 3.2%, ՀՀ Լոռու մարզինը՝ 59 մարդ/կմ2, որոնք ցածր են հանրապետության միջինից, ինչը վկայում է, որ ՀՀ Շիրակի և ՀՀ Լոռու մարզերը համեմատաբար նոսր են բնակեցված:

28. Մարզի բնակչության 41.6%-ը գյուղական բնակչություն է, միևնույն ժամանակ մարզի բնակչության շուրջ 48.4%-ը բնակվում է Գյումրի քաղաքում:

29. Մարզի մշտական բնակչությունը 2012-2016թթ. նվազել է 3.5%-ով, այսինքն՝ 252.1 հազարից նվազել է 243.2 հազարի, ՀՀ Լոռու մարզում նկատվել է բնակչության թվի նվազում 4.5%-ով՝ 235.6 հազարից նվազելով 225.0 հազարի, իսկ նույն ժամանակաշրջանում նկատվում է հանրապետության բնակչության նվազելով 0.75%-ով՝ 3 021.4 հազարից հասնելով 2 998.6 հազարի:

Գծապատկեր 1. Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, մարդ



Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_31.pdf

30. Ծնելիությունը գտնվում է ցածր մակարդակում, որը պայմանավորված է արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թվաքանակով: Մարզի բնակչությունը տարեցտարի ունի նվազման միտում, միևնույն միտումն է նկատվում նաև ՀՀ Լոռու մարզում:

Գծապատկեր 2. ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները



Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_31.pdf

31. 2011-2015թթ. ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզի ամուսնությունների թիվը նվազել է 18.6%-ով, իսկ ՀՀ Լոռու մարզինը՝ 11.4%-ով, Հանրապետությունում ամուսնությունների թվաքանակը ևս նվազել է, սակայն փոքր չափով (10.7%): Հակառակ պատկերն է ամուսնալուծությունների թվաքանակով, ՀՀ Շիրակի մարզում աճել է 9.6%, ՀՀ Լոռու մարզում՝ 9.6% և Հանրապետությունում՝ 15.1%-ով:

32. Մարզի մշտական բնակչության 47.5 %-ը տղամարդիկ են, 52.5%-ը՝ կանայք (2016թ.-ի տարեսկզբի դրությամբ): Մարզի բնակչության մեջ գերակշռում են 25-29 տարեկանները, ընդ որում տղամարդիկ կազմում են 9.8%, կանայք՝ 9.1%: 2016 թվականի առաջին կեսին ծնունդներն ըստ սեռերի ՀՀ Շիրակի մարզում կազմել է 121 տղա, 100 աղջիկ

Գծապատկեր 3. Մշտական բնակչությունն ըստ սեռի և տարիքային խմբերի (%), 2016թ. տարեսկզբին

ՀՀ Շիրակի մարզ **ՀՀ Լոռու մարզ**

տղամարդ տարիք կին տղամարդ տարիք կին



Աղբյուրը՝ http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_08.pdf, http://armstat.am/file/article/marz_2016_29.pdf

3.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

32. ՀՀ Շիրակի մարզի քաղաքային համայնքներն են՝ Գյումրի, Արթիկ և Մարալիկ:

33. **Գյումրի քաղաքը** (2016թ. տարեսկզբին՝ 117.7 հազ. մարդ, որը կազմում է մարզի բնակչության 48.4%-ը) Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքն է, գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Ախուրյան գետի ձախ ափին, Երևանից 126 կմ հեռավորության վրա: Տարածքը՝ 3626 հա է, ծովի մակարդակից բարձր է ավելի քան 1500 մ: Քաղաքը գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին, որի պատճառով Գյումրիում շուրջ 20 հազար մարդ զոհվեց և 22 հազարը մնացին անօթևան: Շարքից դուրս էր եկել քաղաքի շենք-շինությունների և ենթակառուցվածքների շուրջ 70%-ը: Գյումրիում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների նկատմամբ ձևավորված պետական պարտավորությունների շրջանակներում դեռևս լուծված չէ ընդամենը 90 ընտանիքի (այդ թվում՝ ամբողջական փաստաթղթային փաթեթներ ներկայացրած, սակայն շահառուների ճանաչման գործընթացի ժամանակ հանրապետությունից բացակայած մոտ 20 ընտանիքի) բնակարանային խնդիրը, որի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են 2017 թվականի ՀՀ պետական բյուջեով: Քաղաքը հարուստ է պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով: Այս առումով կարևորվում է Գյումրի քաղաքի <<Կումայրի>> պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի դերը: Գյումրին համարվում է արհեստների քաղաք, զարգացած է ճարտարապետությունը, քարագործությունը փայտագործությունը, արծաթագործությունը, ոսկերչությունը, պղնձագործությունը, գորգագործությունը, ժանյակագործությունը, երկաթագործությունը: 2017 թ. դրությամբ



Գյումրիի տեխնոպարկում գործում են 29 ընկերություններ, որոնք ունեն լաբորատորիաներ, կրթական կենտրոններ, բիզնես ենթակառուցվածքներ, գործում է նաև «ԴԷ-Լինք» (D-Link International Pte Ltd) հայտնի տեխնոլոգիական ընկերությունը, Թումո կենտրոնը: ԳՏՏԿ ծրագրավորման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը բազմաբնույթ ծառայություններ է մատուցում, ԳՏԿ-ն տրամադրում է անհրաժեշտ ծառայություններ նորարարական հայկական ընկերություններին, կրթություն և աքսելերացիա՝ երիտասարդներին: Ներկայումս տնտեսության մեջ առանձնանում են շինանյութի, թեթև արդյունաբերության, սննդի և սպասարկման ոլորտները: Քաղաքում գործում են նաև գարեջրի գործարաններ: Այժմ Գյումրիում արդյունաբերության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեցող մշակող արդյունաբերության ենթաճյուղերն են՝ սննդի, ներառյալ խմիչքների արտադրությունը, մանածագործական և կարի արտադրությունը, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը, մեքենաների և սարքավորումների արտադրությունը: Գերակա խնդիրներն են՝ աշխատատեղերի բացակայությունը, բազմաբնակարան շենքերի պահպանության խնդիրը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը, արդյունաբերական հատվածի վերագործարկումը, ներքաղաքային ճանապարհների վատ վիճակը, մաքրման կայանի բացակայությունը:

34. **Արթիկ քաղաքը** (2016թ. տարեսկզբին՝ 18.76 հազ. մարդ, որը կազմում է մարզի բնակչության 7.7 %-ը) գտնվում է մարզկենտրոն Գյումրիից 20 կմ հարավ-արևելք, Երևանից՝ 105 կմ հյուսիս-արևմուտք, Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին: Արթիկը Հայաստանի հնագույն բնակավայրերից է, մարզի երկրորդ քաղաքն է, գտնվում է ծովի մակերևույթից 1750 մ բարձրության վրա, զբաղեցնում է 7 կմ^2 տարածք, 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվը կազմում է 18 800 մարդ, տնտեսությունների թիվը՝ 5 200: Այստեղ է բնակվում մարզի քաղաքային բնակչության շուրջ 13%-ը: Քաղաքը 2006 թվականից ունի գլխավոր հատակագիծ:

Քաղաքում կա 2874 առանձնատուն և 204 բազմաբնակարան շենք: Շենքերից 9-ը վթարային են, դրանցից 8-ը ունեն 3-րդ աստիճանի, մեկը՝ 4-րդ աստիճանի վթարայնության աստիճան: Համայնքում գործում են մի շարք միջին և մանր կազմակերպություններ, որոնք արտադրում են վակումային էլեկտրավառարաններ, մետաղական կառուցվածքներ, ապակե տարաներ, տրիկոտաժի արտադրանք, կահույք, հացամթերք, հրուշակեղեն, կաթնամթերք և արդյունաբերական այլ արտադրանք:

Տնտեսության կարևոր ճյուղերից է գյուղատնտեսությունը, բնակչությունը զբաղվում է դաշտավարությամբ և անասնաբուծությամբ:

35. **Մարալիկ քաղաքը** (2016թ. տարեսկզբին՝ 5.5 հազ. մարդ, որը կազմում է մարզի բնակչության 2.26%-ը), գտնվում է մարզկենտրոնից 27 կմ հարավ, մակերեսը՝ 406 հա, քաղաքի կարգավիճակ է ստացել 1996թ-ից, ունի գլխավոր հատակագիծ՝ 2015 թվականից: Այստեղով են անցնում Գյումրի-Թալին-Երևան մայրուղին և Մարալիկ-Արթիկ-Գյումրի երկաթգիծը: Քաղաքի վարչատարածքում առկա է 1800 հա վարելահող, որից 240 հա-ը ոռոգելի: Քաղաքում կան մի շարք արդյունաբերական կազմակերպություններ: Ունի շինարարական իրերի և շինանյութերի արտադրամաս, որն զբաղվում է որմնաքարերի արտադրությամբ: Համայնքի հիմնախնդիրներից է արդյունաբերական կազմակերպությունների հզորացումը, որով կկանխարգելվի մեծ մասշտաբների հասնող արտագաղթը: Համայնքում առկա է 48 բազմաբնակարան բնակելի շենք և 1505 առանձնատուն: Գործում են «Անի» ՃՇՇ ԲԲԸ, կապի և փոստային ծառայություններ, երկու

դպրոց, ուսումնարան, մշակույթի տուն, շրջանային գրադարան, հյուրանոց, նախադպրոցական հիմնարկ, նախակրթարան, հանրային սննդի օբյեկտներ:

3.4 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

36. Մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց, մարզի բնակչության 100% ապահովված է մշտական երթուղային տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզում գործում են 75 ներմարզային՝ 24 ավտոբուսային և 51 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք սպասարկվում են 14 ուղևորափոխադրող կազմակերպությունների կողմից: Սպասարկման գործում ընդգրկված են 122 տրանսպորտային միջոցներ (ավտոբուսներ՝ 40, միկրոավտոբուսներ՝ 82):

37. Գործում են նաև 17 միջմարզային՝ 3 ավտոբուսային և 14 միկրոավտոբուսային երթուղիներ: Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում են Գյումրի (2 ավտոբուսային և 12 միկրոավտոբուսային) և Արթիկ (մեկ միկրոավտոբուսային) քաղաքներում:

38. Բեռնաուղևորափոխադրումները մարզում հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով:

Աղյուսակ 2. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների մատչելիությունն՝ ըստ մարզերի, 2015թ.

ՀՀ մարզեր	Ներմարզային հասանելիություն, րոպե	Մարզից Երևան հասանելիություն, րոպե	Անհավասարությունը միջև ներհամայնքային հասանելիության միջև, %
ՀՀ Շիրակի մարզ	**35**	**81**	**231%**
ՀՀ Լոռու մարզ	38	92	242%
ՀՀ Կոտայքի մարզ	32	21	65%

Աղյուսակ 3. ՀՀ Շիրակի մարզի պատմամշակութային կենտրոններ

Համայնքներ	Օբյեկտի անվանումը	Հեռավորությունը մարզկենտրոնից
Արթիկ	Լմբատավանք (Վանական համալիր)	29.3 կմ
Անիպեմզա	Տաճար <<Երերույք>>	47.6 կմ
Հառիճ	Հառիճավանք (Վանական համալիր)	34.3 կմ
Սառնաղբյուր	Քարայր (Գրիգոր Լուսավորիչ)	34 կմ
Վահրամաբերդ	Մարմաշեն (Վանական համալիր)	11.3 կմ

Գծապատկեր 4. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության ծավալները





Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_13.pdf

39. Կանոնավոր սպասարկվում են Գյումրի-Երևան, Արթիկ-Երևան, Մարալիկ-Երևան և միջմարզային ավտոբուսային ու միկրոավտոբուսային երթուղիները: Ներքաղաքային երթուղիների սպասարկում է իրականացվում Գյումրի և Արթիկ քաղաքներում: Մարզում ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները կազմակերպվում են մասնավոր ընկերությունների կողմից: Ուղևորափոխադրումների կազմակերպման համար կազմակերպվում են մրցույթներ:

40. **Հեռահաղորդակցություն:** Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է: Հասանելի է նաև բջջային կապը, որն իրականացվում է «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ/ՄՏՍ ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ) օպերատորների միջոցով՝ ողջ մարզի տարածքում:

41. ՀՀ Շիրակի մարզում ֆիքսված հեռախոսակապից օգտվում է թվով 23000 բաժանորդ, որից Գյումրի քաղաքում՝ 16000 բաժանորդ:

42 ՀՀ Շիրակի մարզի տարածքում հեռարձակվում են Հ1, Հ2, «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՑԱՅԳ» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում:

3.5 ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

43. **Ճանապարհներ:** ՀՀ Շիրակի մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտով: Մարզում առկա է միջպետական նշանակության՝ 112.4 կմ, հանրապետական նշանակության՝ 192.1 կմ և 461.1կմ մարզային նշանակության ճանապարհներ: Մարզով է անցնում Մ-1 «Երևան-Գյումրի-Վրաստանի սահման» Հայաստանը Վրաստանին կապող, ինչպես նաև Մ-7 Մ-3 «Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի» սահման Հայաստանը Թուրքիային կապող միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Վերջինս շրջափակման պատճառով չի գործում:

Աղյուսակ 4. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով, (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	112.4	0.04	4.62
Հանրապետական	192.1	0.07	7.90
Մարզային (տեղական)	461.1	0.17	18.96
Երկաթգիծ	180.0	0.07	7.40
Ընդհանուր	945.6	0.35	38.88

44. Որպես ճանապարհաշինարարական ենթակառուցվածքների բարելավում կարևորվում է Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցման գործընթացը, որի շուրջ 90 կիլոմետրը անցնելու է ՀՀ Շիրակի մարզով: Այս պահին ընթանում են շինարարական աշխատանքներ ճանապարհի Լանջիկ-Գյումրի հատվածում, իսկ Գյումրի-Բավրա հատվածը նախագծման փուլում է: Հյուսիս-Հարավ ճանապարհի կառուցումը մեծապես կնպաստի ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների բարելավմանը:

45. **Երկաթուղի:** Մարզի տարածքով է անցնում Հարավկովկասյան երկաթուղին: Մարզի երկաթուղին 180 կմ է, որը կազմում է հանրապետության ողջ երկաթուղու 21.4%-ը: Մարզի տարածքում են գտնվում Գյումրի-Արթիկ-Մարալիկ և Գյումրի-Ախուրյան-Թուրքիայի սահման երկաթուղային հատվածները, որոնք այժմ չեն շահագործվում: Գյումրի-Արթիկ-Մարալիկ երկաթուղային հատվածի ուղևորատար գնացքը չի շահագործվում, ոչ շահութաբեր լինելու պատճառով, իսկ Գյումրի-Ախուրյան-Թուրքիայի սահման երկաթուղային հատվածով ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ չեն իրականացվում Թուրքիայի կողմից շրջափակման պատճառով: Մարզի տարածքով է անցնում Երևան-Թբիլիսի, իսկ ամառային ժամանակահատվածում (հունիսի-15-ից մինչև սեպտեմբերի 30-ը) նաև Երևան-Բաթումի ուղևորատար գնացքը: Այժմ օրական 3 չվերթով գործում է Գյումրի-Երևան էլեկտրագնացքը:

46. Մարզով է անցնում նաև Փոթիի և Բաթումիի նավահանգիստներին կապող երկաթգիծը, որով իրականացվում է Հայաստանի Հանրապետություն ներկրվող բեռնափոխադրումները:

47. Մարզում գտնվող երկաթգիծը գործում է իր թողունակության հնարավորության 10%-ի չափով:

48. **Օդանավակայաններ:** Գյումրիի ԻԿԱՕ-ի առաջին կարգախմբի <<Շիրակ>> միջազգային օդանավակայանը գործում է 1961 թվականից և իր ցուցանիշներով երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Օդանավակայանը գտնվում է Գյումրի քաղաքից 5 կմ և Երևանից 120կմ հեռավորության վրա: 2016 թվականի դեկտեմբեր ամսից <<Պոբեդա>> ընկերության կողմից վերսկսվել է 2016 թվականի ցածր գներով չվերթների իրականացում Գյումրի-Մոսկվա-Գյումրի երթուղիով:

49. Ընդհանուր առմամբ մարզում միջազգային օդանավակայանի և երկաթուղու առկայությունը գնահատվում է որպես մրցակցային առավելություն հանրապետության մյուս մարզերի նկատմամբ:

50. **Ջուր:** Շիրակի մարզի բնակչությունը **խմելու ջուրը** ստանում է Ղազանչի, Ջույգաղբյուր, Արևիկ ջրաղբյուրներից, Մանթաշ ջրամբարներից և տեղական աղբյուրներից: Մարզը հարուստ է իր ջրային ռեսուրսներով: Մարզում է գտնվում Ախուրյանի ջրամբարը՝ 526 մլն.մ^3 տարողությամբ, Արփի լիճը՝ 105 մլն.մ^3, Վարդաքարի ջրամբարը՝ 5.0 մլն.մ^3, Մանթաշի ջրամբարը՝ 8.2 մլն.մ^3, Կառնուտի ջրամբարը՝ 22.6 մլն. մ^3, Սառնաղբյուրի ջրամբարը՝ 4.8 մլն.մ^3, Թավշուտի ջրամբարը՝ 6.0 մլն.մ^3: Այժմ ընթացքի մեջ է Կապսի ջրամբարի շինարարական աշխատանքները: Ջրամբարի պատվարային հանգույցն առաջին փուլում նախատեսված է կառուցել 25 մլն.մ^3 ծավալի համար: Նշված պատվարը կկառուցվի այնպես, որ հետագայում հնարավոր լինի այն բարձրացնել՝ ջրամբարի ծավալը հասցնելով 60 մլն մ^3-ի: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կկազմի շուրջ 5 տարի և այն թույլ կտա ընդգրկել ավելի քան 5 հազար հա նոր ոռոգելի տարածքներ, ինչպես նաև բարելավել ներկայումս ոռոգվող տարածքների ջրապահովությունը:

51. Նշված ջրային ռեսուրսներն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիայի արտադրության նպատակներով:

52. ՀՀ Շիրակի մարզում 2016 թվականի ընթացքում մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 14 551 նմուշի հետազոտություն, արձանագրվել է 3 043 շեղում (20.9%): Մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ արձանագրվել են՝ Բասեն, Կամո, Ջաջուռկայարան, Կարմրաքար, Սարիար, Լեռնուտ, Հարթաշեն, Սարալանջ, Հառիճ, Նահապետավան, Գետափ, Սպանդարյան, Անուշավան, Փանիկ, Մեղրաշեն, Հայկասար, Փոքր

Մանթաշ, Գեղանիստ, Արևշատ, Մեծ Մանթաշ, Լեռնակերտ, Անի Կայարան, Ջրափի, Իսահակյան, Կրաշեն համայնքներում: Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով հետազոտվել է 4 720 նմուշ, շեղումներ արձանագրվել է 1 534 նմուշում (32.5%): Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով շեղումներ արձանագրվել են ՀՀ Շիրակի մարզի Քեթի, Գոգհովիտ, Ախուրյան, Հովունի, Մարմաշեն, Ամասիա, Արեգնադեմ, Մեղրաշատ, Հողմիկ, Ողջի, Ջրաձոր, Մուսայելյան, Հարթաշեն, Սալուտ, Վարդաղբյուր, Հարթաշեն, Փանիկ, Հառիճ, Հայկասար, Սարալանջ, Մեղրաշեն, Բասեն, Ջրառատ, Հովիտ, Ջաջուռ, Կամո, Փոքրաշեն, Կրաշեն, Սարիար, Բաշգյուղ, Ձորաշեն, Բագրավան, Ջրափի, Աղին, Իսահակյան, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ, Գեղանիստ, Պեմզաշեն, Արևշատ, Ալվար, Աղվորիկ, Արդենիս, Ձորակեր, Ձարիշատ, Շաղիկ, Գառնառիճ, Բերդաշեն, Շաղկուտ, Քեթի համայնքներում:

53. **Էներգետիկ ենթակառուցվածքներ:** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն 2017թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 8 փոքր ՀԷԿ -եր, տարեկան մոտ 55 մլն.կվտժ՝ 19275 կՎտ ընդհանուր հզորությամբ:

54. **Գազաֆիկացում:** ՀՀ Շիրակի մարզով է անցնում 45 կմ երկարությամբ բարձր ճնշման մայրուղային գազատար: 2016թ. դրությամբ մարզում գազաֆիկացված է 62 բնակավայր (52.1%), որից՝ 3-ը քաղաքային, որտեղ ապրում է մարզի բնակչության 58%, գազաֆիկացված չէ 57 բնակավայր:

55. **Կեղտաջրերի կառավարման** ենթակառուցվածքները գտնվում են անբավարար վիճակում: Կոյուղու համակարգ ունեն 8 բնակավայրեր (Գյումրի, Ախուրյան, Արթիկ, Մարալիկ, Հովունի, Երազգավորս, Ամասիա, Գոգհովիտ,), իսկ 7 բնակավայրեր՝ մասամբ (Կապս (30%), Հայկավան (10%), Մայիսյան (50%), Շիրակ (30%), Աշոցք, Ձույգաղբյուր, Թորոսգյուղ): Մարզի մնացած համայնքները չունեն կոյուղու համակարգ: Ներկայումս չի գործում Գյումրու կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանը, որի հետևանքով բոլոր կոյուղագծերը միացված են հոսող գետերին:

56. **Աղբահանությունը** մարզի 3 քաղաքային համայնքներում իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից, մի շարք համայնքներ ունեն աղբահան մեքենաներ և աղբահանությունն իրականացվում են սեփական միջոցներով, իսկ մնացած համայնքներում՝ պայմանագրային հիմունքներով: Կուտակված բոլոր թափոնները հեռացվում են տեղական աղբանոցներ, առանց որևէ բնապահպանական միջոցառումների: Իրավիճակից ելնելով Ասիական Զարգացման Բանկի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, ինչպես նաև տարածքային և տեղական իշխանությունների հետ սերտ համագործակցությամբ <<Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման տնտեսատեխնիկական հետազոտություն>> նախագծի շրջանակներում իրականացվում է մարզի ներդրումային փաթեթի տեխնիկական գնահատում:

57. **Հիմնախնդիրներ:** Մարզային ենթակայության ավտոմոբիլային ճանապարհների զգալի մասն անցնում է խստաշունչ և երկարաձիգ ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, որոնք ֆինանսական միջոցների բացակայության պատճառով գտնվում են ոչ բարվոք վիճակում: Կլիմայական պայմանների բացասական ազդեցության հետևանքով մարզային ենթակայության ճանապարհների զգալի մասը քանդվել ու դարձել են տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի, իսկ որոշ հատվածներում նույնիսկ անանցանելի:

58. Մարզում տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոն է հանդիսանում անմխիթար վիճակում գտնվող ավտոմոբիլային ճանապարհների (հատկապես գյուղական բնակավայրերի) խնդիրը: Այս խնդիրը հատկապես գերակա է Աշոցք, Սարապատ, Արփի և Ամասիա համայնքներում:

59. Ոլորտի հիմնախնդիրներից են տեղական նշանակության ճանապարհների հիմնանորոգման անհրաժեշտությունը: Խիստ վերանորոգման կարիք ունեն հատկապես

«Շիրակ-Կամո», «Հայրենյաց-Տուֆաշեն», «Առափի-Ոսկեհասկ-Ախուրիկ», «Բյուրակն-Ողջի», «Գյումրի-Հացիկ» և «Մայիսյան-Հովունի» ճանապարհները (շուրջ 37կմ):

3.6 ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

60. 2015թ. ՀՀ ՀՆԱ կազմել է շուրջ 5032.09 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 103%, կամ մեկ շնչի հաշվով շուրջ 1.675 մլն ՀՀ դրամ [http://www.armstat.am/am/?nid=126&id=01001]: 2016թ. ՀՀ ՀՆԱ կազմել է շուրջ 5067.87 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 100.2%, կամ մեկ շնչի հաշվով շուրջ 1.69 մլն ՀՀ դրամ [http://www.armstat.am/am/?nid=126&id=01001]:

Գծապատկեր 5. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ, 2009-2015թթ.



Աղբյուրը՝ http://www.armstat.am/am/?nid=126&type=1

61. Հայաստանի զարգացման ռազմավարությունը պարունակում է ՀՆԱ փորձագիտական հաշվարկ՝ 2009–2015թթ. համար: Ստորև ներկայացված գնահատումը հիմնված է ՀՆԱ ոլորտային բաշխվածության մասով այս պահին հասանելի վիճակագրական տվյալների, տնտեսության հիմնական ճյուղերի մարզային բաշխվածության և մարզերում մշտական բնակչության քանակի վրա:

Գծապատկեր 6. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը 2009-2015թթ. և Հայաստանի ՀՆԱ-ի մարզային մասնաբաժինները, 2015թ.





Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրներն ըստ մարզերի և Երևան քաղաքի 2015 թվականին (մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամ)



Աղբյուրը՝ http://armstat.am/file/doc/99500988.pdf

62. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն երկրում աճել է 71.4%-ով, 2009-2015թթ. ընթացքում, իսկ տարբերությունն ամենաբարձր ու ամենացածր տարածքային ցուցանիշների միջև պակասել է 4.4-ից մինչև 3.1 անգամ: Այդ նվազումը տեղի է ունեցել, բացառությամբ ՀՀ Շիրակի մարզից, մյուս բոլոր մարզերում Երևանի համեմատությամբ ՀՆԱ-ի ավելի բարձր աճի տեմպերի պատճառով:

63. ՀՀ Շիրակի մարզում ապահովվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 52%-ը, որը ազգային միջինի 70%-ից ցածր է: Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ում ՀՀ Շիրակի մարզի մասնաբաժինը 2015 թվականին կազմել է 4%՝ 2009 թվականի 5%-ի դիմաց:

64. ՀՀ Շիրակի մարզում պետական սեկտորում ներգրավված աշխատողների աշխատավարձն աճել 2013-2015 թվականներին, սակայն այն կազմում է միջին հանրապետական ցուցանիշի միայն շուրջ 72.6%: Միևնույն ժամանակ աճել է նաև ոչ պետական հատվածում ներգրավվածների աշխատավարձը, այս դեպքում ՀՀ Շիրակի մարզի աշխատողները ստանում են միջին մակարդակից շուրջ 23.7%-ով ցածր աշխատավարձ:

Գծապատկեր 8. Միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ տնտեսության հատվածների



Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_16.pdf

Գծապատկեր 9. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով 2009-2015թթ., դրամ



Աղբյուրը՝ http://www.gov.am/files/docs/1322.pdf

65. ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով 2011-2015թթ. ընթացքում աճել է 31.8%-ով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 11%-ով: Իսկ ՀՀ Լոռու մարզում նույն ցուցանիշը հանրապետական միջինից բարձր է 2%-ով: Դա մեծապես կախված է մարզերի աշխարհագրական դիրքի ու կլիմայական տարբերություններից, ինչպես նաև մարզում հացահատիկի, կարտոֆիլի, տեխնիկական և այլ մշակաբույսերի ցանքատարածությունների աճից:

3.7 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

66. ՀՀ Շիրակի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության քանակը կազմում է 107000 մարդ: 2015 թվականին Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 62.5%, իսկ ՀՀ Շիրակի մարզինը՝ 56.1%, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 6.4%-ով: 2012 թվականի համեմատ մարզի տնտեսական ակտիվության մակարդակը աճել է 3.1%-ով (Աղբյուրը՝ աշխատուժի հետազոտություն):

67. Ի տարբերություն ՀՀ Շիրակի մարզի՝ ՀՀ Լոռու մարզում 2015 թվականին տնտեսության ակտիվության միջին ցուցանիշ է գրանցվել 58.8%, որը հանրապետական միջին

ցուցանիշից ցածր է 3.7%-ով: 2012 թվականի նկատմամբ ակտիվությունը նվազել է 2%-ով: Տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը կազմել է 83 700 մարդ, որից 14 300-ը ուսանողներ են, 29 500-ը տնային տնտեսություն վարողներ, 16 500-ը կենսաթոշակառուներ և հաշմանդամներ, 23 400-ը աշխատանք չունեցող այլ անձինք:

Աղյուսակ 5. Աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշներ

	Տնտեսապես ակտիվ բնակչություն, 1 000 մարդ		2015 / 2014, %	Զբաղվածներ, 1 000 մարդ		2015 / 2014, %	Գործազուրկներ, 1 000 մարդ		2015 / 2014, %
	2014	2015		2014	2015		2014	2015	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	1 375.7	1 316.4	95.7	1 133.5	1 072.6	94.6	242.1	243.7	100.7
ՀՀ Շիրակի մարզ	**130.7**	**107.0**	**81.9**	**103.5**	**86.6**	**83.7**	**27.2**	**20.3**	**74.6**
ՀՀ Լոռու մարզ	137.8	114.7	83.2	114.5	96.7	84.5	23.4	18.1	77.4

Աղբյուր՝ http://www.armstat.am/file/article/sv_03_16a_141.pdf

68. ՀՀ Շիրակի մարզում գործում են զբաղվածության հինգ տարածքային կենտրոններ:

Գծապատկեր 10. Գործազրկության մակարդակը, (%)



Աղբյուր՝ http://www.armstat.am/am/?nid=82&id=1861, 15.Trud_2016_8

69. Տվյալները ցույց են տալիս, որ գործազրկության մակարդակը բարձր է մարզի քաղաքներում՝ 16.2%, որից 10.6%-ը կանայք են, իսկ ՀՀ Լոռու մարզում՝ համապատասխանաբար՝ 15.6% և 9.6%:

70. 2015 թվականին Հայաստանում գործազրկության մակարդակը կազմել է 18.5%, որից տղամարդիկ՝ 17.6%, կանայք՝ 19.5%: ՀՀ Շիրակի մարզում գործազրկության մակարդակը կազմում է 19%, ինչը պայմանավորված է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թվաքանակի հետ: 2015 թվականին մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել են աշխատանք փնտրող երիտասարդներ՝ 4806 մարդ, իսկ երիտասարդ գործազուրկներ՝ 3908 մարդ: Ընդամենը աշխատանքի են տեղավորվել 1006 մարդ [http://www.armstat.am/file/article/sv_09_16a_141.pdf]:

71. ՀՀ Շիրակի մարզում 2015 թվականին զբաղված բնակչության թիվը կազմել է 86.6 հազ. մարդ, որից տղամարդ՝ 42.6 հազ.մարդ, կին՝ 44.1 հազ.մարդ, քաղաքային համայնքներում՝ 34.5 հազ. մարդ, գյուղական համայնքներում՝ 52.1 հազ մարդ:

72. Նույն ժամանակահատվածում հանրապետությունում զբաղվածների թիվը կազմել է 1072.6 հազ. մարդ: ՀՀ Շիրակի մարզում զբաղվածների թիվը կազմել է հանրապետական ցուցանիշի 8.07%-ը:

Գծապատկեր 11. Ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակն ըստ մարզերի



Աղբյուրը՝ http://www.armstat.am/file/article/9.trud_2016_4.3.pdf

73. 2015 թվականին ոչ ֆորմալ զբաղվածությունը զբաղվածության նկատմամբ հանրապետությունում կազմել է 47.7%, իսկ ՀՀ Շիրակի մարզում՝ 60.6%:

74. Միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին ըստ տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների կազմել է պետական՝ 160 522 դրամ, ոչ պետական՝ 184416 դրամ: ՀՀ Շիրակի մարզում կազմել է պետական՝ 116 555 դրամ, ոչ պետական՝ 140 567 դրամ, ինչը ցածր է հանրապետական միջին աշխատավարձից [http://www.armstat.am/file/article/20.trud_2016_13.pdf]:

75. Ըստ կրթական ցենզի հետբուհական և բարձրագույն կրթություն ունեցողների թիվը կազմում է գործազուրկների թվի 16.1%-ը, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 17.5%-ը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողները՝ 10.5%-ը, ընդհանուր միջնակարգ, հիմնական ընդհանուր, հատուկ ընդհանուր և տարրական կրթություն ունեցողները՝ 55.9%-ը [http://www.armstat.am/file/article/sv_09_16a_141.pdf]:

3.8 ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

76. 2016 թվականի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում կազմակերպությունների քանակը (բոլոր իրավաբանական ձևերի) կազմել են 5849 սուբյեկտ:

77. ՀՀ Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, մանածագործական արտադրությունը և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

78. 2015թ.-ին ՀՀ Շիրակի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

1) արդյունաբերություն՝ 3.0%,
2) գյուղատնտեսություն ՝ 10.9%,
3) շինարարություն՝ 2.2%,
4) մանրածախ առևտուր՝ 3.5%,
5) ծառայություններ՝ 2.2%:

79. Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի գծով ՀՀ Շիրակի մարզի ցուցանիշները բարձր են միջին հանրապետական թվերից, իսկ շինարարության, արդյունաբերության, մանրածախ առևտրի և ծառայությունների գծով ցածր են [http://www.armstat.am/file/RegStat/marz/MARZ_08.pdf]:

80. 2015թ-ին ՀՀ Շիրակի մարզի տնտեսության աճը 2011 թվականի նկատմամբ կազմել է ընդամենը 5.2%: Աճի հիմնական գործոնները հանդիսացել են գյուղատնտեսությունը,

առևտուրը և ծառայությունների ոլորտները: Խիստ բացասական ազդեցություն է ունեցել շինարարության անկումը մոտ 2.8 անգամ [http://armstat.am/file/article/marz_2016_11.pdf]:

Գծապատկեր 12. Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, (ՀՀ մլն.դրամ)



Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf, http://armstat.am/file/article/marz_14_10.pdf, http://armstat.am/file/article/marz_12_10.pdf

81. Մարզի ամբողջ արդյունաբերության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը ունի մշակող արդյունաբերությունը՝ 80.9%, որից սննդամթերքի արտադրություն՝ 65.5%, խմիչքների արտադրություն՝ 6.4%, հագուստի արտադրություն՝ 3.2% և մանածագործական արտադրատեսակների արտադրություն, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից, մեքենաների և սարքավորումների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում՝ 5.8% [http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf]:

82. 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզում արտադրանք են թողարկել մոտ 100 տնտեսավարող սուբյեկտներ, որից 76 տոկոսը կազմում են գերփոքր և փոքր կազմակերպությունները:

83. Մարզերի արտահանման կարողությունը վերջիններիս միջազգային մրցունակության հստակ արտացոլումն է և չափազանց կարևոր է, քանի որ տեղական մեծ շուկաների բացակայությունը լուրջ խնդիր է հայկական ընկերությունների համար:

84. ՀՀ Շիրակի մարզում 2015թ.-ի ընթացքում թողարկվել է 40668.6 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, որը կազմել է հանրապետությունում արտադրված արտադրանքի 3.1%-ը:

Գծապատկեր 13. Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, (%)



Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf, http://armstat.am/file/article/marz_14_10.pdf, http://www.armstat.am/file/article/marz_13_10.pdf, http://armstat.am/file/article/marz_12_10.pdf

85. 2015թ. արդյունաբերական արտադրանքի ծավալները նախորդ տարվա հետ համադրելի գներով համեմատելիս աճի տեմպը կազմել է 78.7%: Մարզի արդյունաբերական արտադրության 19%-ը բաժին է ընկել էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակմանը [http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf]:

86. 2009-2014թթ. ժամանակահատվածում (ըստ՝ 2009թ-ի անփոփոխ գների ու փաստացի բնակչության) Հայաստանի մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի արժեքն ավելացել է 21%-ով, ՀՀ Շիրակի մարզում այն ավելացել է 77%-ով, ՀՀ Լոռու մարզում՝ 4.5%-ով: Չնայած այն հանգամանքի, որ նշված ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի տեմպը ՀՀ Շիրակի մարզում էականորեն բարձր է միջին հանրապետականից:

87. 2014 թվականին ՀՀ Շիրակի մարզում արտադրանք են թողարկել մոտ 100 տնտեսավարող սուբյեկտներ, որից 76%-ը կազմում են գերփոքր և փոքր կազմակերպությունները:

Աղյուսակ 6. Մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալը, անփոփոխ գների դեպքում, 2009-2014թթ. ժամանակահատվածում (ՀՀ դրամ)

Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009-2014թթ., ՀՀ դրամ							Արդյունաբերական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված Հայաստանի միջինի %-ով		Փոփոխությունը 2009 - 2014թթ. ընթացքում (% միավորներով)
	2009	2010	2011	2012	2013	2014	2009	2014	
ՀՀ	230,992	264,121	298,509	328,246	291,290	280,394	100	121	21
ՀՀ Շիրակի մարզ	**75,131**	**98,652**	**157,302**	**147,503**	**124,474**	**133,000**	**33**	**47**	**15**
ՀՀ Լոռու մարզ	199,486	251,415	290,509	313,597	239,381	208,597	86	74	-12

88. 2011-2015թթ. ժամանակահատվածում Հայաստանից արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով տեսակարար կշիռը աճել է 0.2%-ից մինչև 0.5%: Ինչպես երևում է աղյուսակից ՀՀ Շիրակի մարզում արտահանման ծավալները մեկ շնչի հաշվով մնում է խիստ ցածր Հայաստանի Հանրապետության մեկ շնչի հաշվով արտահանման ծավալներից:

89. ՀՀ Շիրակի մարզից հիմնականում արտահանվում են սնունդ, գարեջուր, մանագործական և կարի արտադրանք [http://www.armstat.am/file/article/marz_2016_18.pdf]: Մարզում առկա է նաև գենդերային անհավասարակշռություն, տարեցտարի նվազում են համայնքի կին ղեկավարների, ավագանու անդամների թիվը:

90. **Գյուղատնտեսության** ուղղություններն են բուսաբուծությունը և անասնապահությունը: Վերջին 5 տարիների ընթացքում մարզում տարեցտարի ավելանում են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 2015թ. համեմատ 2016թ. ցանքատարածությունները ավելացել են շուրջ 1900 հա-ով: Մարզում ընդհանուր ցանքը 2016թ. նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 3364 հա-ով: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 211 078.6 հա, որից՝ 78 163 հա վարելահողեր, 9 837.7 հա խոտհարքներ, 112 128.6 հա արոտներ, 44.5 հա բազմամյա տնկարկներ և 10 905.1 հա այլ հողատեսքեր: 78 163 հա վարելահողերից մշակվում է 70 765 հա, չմշակվող վարելահողերը կազմում են 7 398 հա: Հաշվի առնելով ցանքաշրջանառության բազան, որը պետք է կազմի վարելահողերի շուրջ 30%-ը (23 400հա), մարզում վարելահողերի, արոտների և խոտհարքների նպատակային օգտագործման մակարդակը բարձր է (չի մշակվում 7 398հա, ցանքաշրջանառության բազան ներկայումս կազմում է (10%):

Աղյուսակ 7. Գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2009-2015թթ.(ՀՀ մլրդ դրամ)

	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Հայաստանի Հանրապետություն	557.2	636.7	795	841.5	919.1	993.5	1001.2
ՀՀ Շիրակի մարզ	**56.4**	**71.1**	**93**	**94**	**106.3**	**109.0**	**109.5**
ՀՀ Լոռու մարզ	37.3	41.8	57.1	57.4	67.5	73.8	75.2

Աղբյուրը՝ http://armstat.am/file/article/marz_2016_11.pdf

91. Գյուղատնտեսական մթերքների իրացումից ստացված համախառն եկամուտը 2015թ. կազմել է 109.5 մլրդ դրամ, որը կազմում է հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի 10.9%-ը:

Աղյուսակ 8. Մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը հաստատուն գներով (2009), 2009-2015թթ. (ՀՀ դրամ)

Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ., ՀՀ դրամ								Գյուղատնտեսական արտադրանքը մեկ շնչի հաշվով, անփոփոխ գներով, 2009թ, արտահայտված Հայաստանի միջինի %	
	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2009	2015
Հայաստանի Հանրապետություն	190 515	167 200	179 096	200 462	222 177	239 356	258 500	100	135
ՀՀ Շիրակի մարզ	**234 360**	**228 525**	**257 883**	**277 218**	**319 976**	**328 944**	**339 938**	**123**	**145**
ՀՀ Լոռու մարզ	164 028	143 465	170 153	183 107	221 258	244 207	267 307	86	162

Աղբյուրը՝ http://armstat.am/am/?nid=82&id=1854

92. ՀՀ Շիրակի մարզի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը մեկ շնչի հաշվով 2009-2015թթ. ընթացքում աճել է 45%-ով (ըստ 2009թ. անփոփոխ գների ու փաստացի բնակչության), որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 10%-ով: Դա մեծապես կախված է մարզերի աշխարհագրական դիրքի ու կլիմայական տարբերություններից, ինչպես նաև մարզում հացահատիկի, կարտոֆիլի, տեխնիկական և այլ մշակաբույսերի ցանքատարածությունների աճից:

93. Գյուղատնտեսական արտադրությունը կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզում գործում են 28 200 ընտանեկան (գյուղացիական) տնտեսություններ և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 16 կազմակերպություններ: Գյուղատնտեսության մեջ զբաղված է մարզի բնակչության 41.6%-ը: Մարզում մշակում են հիմնականում հացահատիկային մշակաբույսեր, բանջարեղեն, կարտոֆիլ: Վերջին տարիներին մարզում ավելացել է հացահատիկի սուպեր էլիտա, էլիտա և առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմնացուի արտադրությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների թիվը:

94. Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը և արդյունավետությունը բարձրացնելու, բուսաբուծական արտադրանքի արտադրությունն առավել արդյունավետ կազմակերպելու, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ է հողերի խոշորացում, տնտեսությունների միավորում, դրանց համատեղ գործունեության կազմակերպման մեխանիզմների մշակում և ներդրում, հակակարկտային կայանների թվի ավելացում, վերամշակող կազմակերպությունների ավելացում և ոռոգելի հողերի ընդլայնում:

95. Մարզում գործում է <<Գյումրու սելեկցիոն կայան>> ՓԲԸ, որը տարիներ շարունակ ապահովել է հանրապետությունում մրցունակ բարձր վերարտադրության հացահատիկային, կերային և հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմացուներով:

96. Մարզի անասնաբուծության հիմնական ուղղությունը կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունն է: Մարզում գործում են կաթի վերամշակման ավելի քան 6 մասնագիտացված կազմակերպություններ (<<Իգիթ>>, <<Բանդիվան կաթ>>, <<Ալեքպոլ>>, <<Աշոցք պանրագործարան>>, <<Ամասիա պանրագործարան>>, <<Արդենիս կաթ>>), որոնց արտադրանքը սպառվում է հանրապետության շուկաներում և արտահանվում է: Մարզում զարգացած է անասնապահությունը և մեղվաբուծությունը:

97. **Շինարարություն՝** 2011-2015թթ. պետական բյուջեի և այլ ֆինանսական միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում իրականացվել են 94 323.5 մլն դրամ գումարի շինարարական աշխատանքներ, որոնք երկրաշարժի հետևանքով

անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը, կրթական օբյեկտների (դպրոցներ) կառուցումը, մասնակի վերանորոգումը և ջեռուցման համակարգերի անցկացումը, նախակրթարանների կառուցումը, մշակութային օբյեկտների վերանորոգումը, համայնքային կենտրոնների վերանորոգումը, առողջապահական օբյեկտների կառուցումը և վերանորոգումը, սոցիալական ոլորտի օբյեկտների կառուցումը, ՀՀ ԿԱ Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ ՊՀ-ի խմելու ջրի ջրագծերի կառուցումը, Գերմանական զարգացման վարկային բանկի աջակցությամբ (KFW) Գյումրի, Մարալիկ քաղաքների և մարզի այլ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ամբողջովին վերանորոգումը, Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ Արթիկ քաղաքի և տարածաշրջանի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավումը, ավտոճանապարհների (փողոցների) հիմնանորոգումը [http://www.armstat.am/file/article/marz_2016_12.pdf]:

98. **Զբոսաշրջություն՝** ՀՀ Շիրակի մարզում առկա պատմամշակութային հուշարձանները և, մասնավորապես, Գյումրու <<Կումայրի>> արգելոցի մեջ մտնող շինությունները, Հառիճի և Մարմաշենի վանական համալիրները, Գուսանագյուղի և Վահրամաբերդի ամրոցները հանդիսանում են նպաստավոր պայմաններ զբոսաշրջության զարգացման համար, իսկ <<Արփի լիճ>> ազգային պարկն իր ուրույն կենսաբազմազանությամբ էկոտուրիզմի կազմակերպման լավագույն տարածքն է: Մարզ այցելող զբոսաշրջիկների համար որպես առանձնահատուկ գրավիչ վայրեր կարող են հանդիսանալ Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը, Ջաջուռում՝ Մ.Ավետիսյանի տուն-թանգարանը, Գյումրու <<Սև բերդ>> ամրոց-հանդիսասրահը, ինչպես նաև մյուս թանգարաններն ու պատկերասրահները:

3.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

99. 2017 թվականի հունվար ամսվա դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են 62 համայնքապատկան մանկապարտեզ՝ 3 478 սաներով և 62 դպրոցահեն նախակրթարան՝ 1 078 սաներով: Մանկապարտեզների և նախակրթարանների թիվը 2014-2015 թվականների համեմատ համապատասխանաբար աճել է 8-ով: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների 2015 թվականի դրությամբ մարզում գործում էին 51 նախադպրոցական հաստատություն, որը հանրապետական ցուցանիշի 7% է, իսկ սաների ընդհանուր թիվը կազմել է 4385, որը հանրապետական ցուցանիշի 6% է [http://armstat.am/file/doc/99500083.pdf/]: Եթե բերված տվյալները համեմատենք ՀՀ Լոռու մարզի տվյալների հետ պարզ կդառնա, որ 2015 թվականի դրությամբ ՀՀ Լոռու մարզում գործել է 66 նախադպրոցական հաստատություն, որը հանրապետական ցուցանիշի 9.2% է, իսկ սաների ընդհանուր թիվը կազմել է 4474, որը հանրապետական ցուցանիշի 6.1% է [http://armstat.am/file/doc/99500273.pdf/]:

100. 2017 թվականի հունվար ամսվա դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են 170 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 166-ը՝ պետական, այդ թվում՝ 149-ը մարզային ենթակայության, 4-ը՝ տարրական, 42-ը՝ հիմնական, 100-ը՝ միջնակարգ, 2-ը՝ հատուկ, 1-ը՝ երեկոյան, 17-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, որից 3-ը՝ վարժարան, 1-ը՝ միջնակարգ, 13-ը՝ ավագ դպրոց և 4 ոչ պետական ուսումնական հաստատություն: 2014-2015 թվականների համեմատ 2016 թվականին մարզի հիմնական դպրոցների թիվը կրճատվել է 2-ով: Նշված պետական հաստատություններում 2016-2017 ուս. տարում ընդհանուր թվով սովորում են 28 631 աշակերտ, իսկ ոչ պետական հաստատություններում՝ 262 աշակերտ: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների 2015 թվականի դրությամբ մարզում գործում էին 172 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ 167 պետական և 5 ոչ պետական, որը հանրապետական ցուցանիշի 11.9%-ն է: Աշակերտների քանակը կազմել է 30670 սովորող կամ հանրապետական ցուցանիշի 8.4%-ը [http://armstat.am/file/doc/99500083.pdf]:

101. Եթե բերված տվյալները համեմատենք ՀՀ Լոռու մարզի տվյալների հետ, ապա պարզ կդառնա, որ 2015 թվականի դրությամբ ՀՀ Լոռու մարզում գործել է պետական 166 հանրակրթական ուսումնական հաստատություն կամ հանրապետական ցուցանիշի 11.5%-ը, իսկ ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ չեն գործել: Սովորողների թիվը ՀՀ Լոռու մարզում կազմել է 29625 աշակերտ, այսինքն՝ հանրապետական ցուցանիշի 8.1%-ը [http://armstat.am/file/doc/99500273.pdf]:

102. 2017 թվականի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող 5 նախնական (արհեստագործական) և 9 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ, որոնցից մեկում իրականացվում է նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագիր»: ՀՀ կառավարության 2014թ. հոկտեմբերի 23-ի թիվ 1191-Ն որոշմամբ հաստատվել է բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը, որով ՀՀ բուհերում իրականացվում է ընդունելություն: Համընդհանուր ներառական կրթությանն անցնելու գործընթացի շրջանակներում, խնդիր է նաև դպրոցական շենքերը հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի դարձնելը: Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների 2015 թվականին ՀՀ Շիրակի մարզում կա 5 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություն, որը հանրապետական ցուցանիշի 11.3%-ն է կազմում: Այստեղ սովորողների թիվը հասել է 1028-ի, որը հանրապետական ցուցանիշի 14.9%-ն է: Նույն աղբյուրի համաձայն ՀՀ Շիրակի մարզում 2015 թվականին գործել է 12 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որը հանրապետականի 12.3% է կազմում: Սովորողների թիվը կազմել է 2187 ուսանող կամ հանրապետական ցուցանիշի 9%-ը [http://armstat.am/file/doc/99500083.pdf]: 2015 թվականին ՀՀ Լոռու մարզում գործում էին 4 նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններ (հանրապետական ցուցանիշի 9%-ը), որտեղ սովորել են 550 ուսանող կամ հանրապետական ցուցանիշի 8%-ը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը 2015 թվականին Լոռու մարզում կազմել է 9 հաստատություն (9.2%), սովորողների թիվը կազմել է 1912 ուսանող (7.8%) [http://armstat.am/file/doc/99500273.pdf]:

103. 2017 թվականի հունվարի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գործում են 9 բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ 6 պետական և 3 ոչ պետական: Ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 5 503 ուսանող, 2014 թվականին այս թիվը կազմել է 6 282, իսկ 2015 թվականին՝ 5 539 ուսանող: Չնայած նկատելի է ուսանողների թվի փոքր նվազում նախորդ տարիների համեմատ, սակայն պետք է նշել, որ այս բուհերի առկայությունը նկատելիորեն նվազեցնում է մարզից դեպի Երևան ուսանողների հոսքը: 2015-2016 ուսումնական տարում ՀՀ Շիրակի մարզում ուսանողների թիվը կազմել է 4535 սովորող կամ հանրապետական ցուցանիշի 5.3%-ը [http://armstat.am/file/doc/99500083.pdf]: 2015 թվականին ՀՀ Լոռու մարզում գործել են 4 բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ 3 պետական և 1 ոչ պետական: 2015-2016 ուսումնական տարում Լոռու մարզում բուհերի ուսանողների թիվը կազմել է 3522 սովորող կամ հանրապետական ցուցանիշի 4.1%-ը [http://armstat.am/file/doc/99500273.pdf]:

104. ՀՀ Շիրակի մարզի կրթական համակարգի հիմնական խնդիրն է հանդիսանում մասնագիտական կրթության անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին: Տարիներ շարունակ և շատ մասնագիտություններ այսօր մարզի աշխատաշուկայում պահանջարկ չունեն, որի արդյունքում կրկնակի գումար է ծախսվում ինչպես ոչ անհրաժեշտ մասնագիտություն ստանալու, այնպես էլ վերապատրաստման միջոցով այլ մասնագիտություն ստանալու համար:

105. Մարզի տարածքային զարգացման քաղաքականության առաջընթացը կախված է նաև ժամանակակից կրթություն ստանալու հնարավորություններից: Մարզում կազմավորվել և գործում է «Գյումրու տեխնոլոգիական կենտրոն»-ը (GTC), որը նպաստում է ընդհանուր

առաջընթացի և ներդրումային գրավչության բարելավմանը, որտեղ հաճախում են 110 ուսանողներ և դպրոցահասակ տարիքի երեխաներ: Մարզի ՏՀՏ ընկերությունները մասնագիտացած են ծրագրային ապահովման պատվերների և արտապատվիրման, մուլտիմեդիայի նախագծման, ինտերնետային ծրագրավորման, <<Web>> ծրագրավորման, տեղեկատվական համակարգերի ու համակարգերի ինտեգրման ոլորտներում:

106. Մարզում գործում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի մասնաճյուղը, որն իր գործունեությամբ մեծապես նպաստում է մարզում կրթության զարգացմանը:

107. Կրթության ոլորտի հիմնախնդիրները՝ անհրաժեշտ է դպրոցները համալրել լաբորատոր, դպրոցական և սպորտային գույքով: Մեծ թվով դպրոցներ օգտագործում են 20-30 տարվա բարոյապես և ֆիզիկապես մաշված գույք և լաբորատոր սարքավորումներ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգման, վերանորոգման, մարզադահլիճների (66 դպրոցում ընդհանրապես չկա մարզադահլիճ), և մարզահրապարակների կառուցման, վերականգնման և նորոգման աշխատանքների կազմակերպում: Դեռևս 37 դպրոցներում ջեռուցումն իրականացվում է հեղուկ վառելանյութի վառարաններով, ինչն իր արդյունավետությամբ, շահագործման հարմարավետությամբ և անվտանգության առումով զգալիորեն զիջում է ջեռուցման գազիֆիկացման ձևերին:

108. Մարզի որոշ հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են կապիտալ վերանորոգման, շուրջօրյա ջրամատակարարման, կոյուղով, խաղահրապարակներով, մարզադահլիճներով և ջեռուցման կենտրոնացված համակարգերով ապահովման խնդիրները, որոնք բացասաբար են անդրադառնում երեխաների և դեռահասների առողջության վրա: Մասնավորապես, ՀՀ Շիրակի մարզի Գեղանիստի, Նահապետավանի, Փոքր Մանթաշի, Սարատակի, Լուսակերտի, Հայրենյացի, Մեծ Մանթաշի միջնակարգ դպրոցները և Գյումրու թիվ 1,3,5,9,11,12,16,22,23,30, Արևիկի, Մայիսյանի, Լեռնակերտի, Սպանդարյանի, Փոքր Մանթաշի, Հայրենյացի նախադպրոցական ուսումնական հաստատությունը ունեն վառարանային ջեռուցում:

3.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ

109. Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով կազմել է քաղաքային՝ 47161 և գյուղական՝ 35786 [http://www.armstat.am/file/doc/99500988.pdf]:

110. Մարզում բնակարանային ֆոնդը կազմում է 10 196 245 մ^2, որից գյուղականը կազմում է 50.5%: Բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը կազմում է 31 210 միավոր, որից համայնքների կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը կազմում է 9943 միավոր: Հանրակացարանների ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 11584 մ^2: Բնակելի տների քանակը կազմում է 43895 միավոր, որը կազմում է հանրապետական ընդհանուր քանակի 10.3% [http://armstat.am/file/doc/99500083.pdf]:

111. Քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 3 615 մ^2, քաղաքների փողոցների, անցումների ընդհանուր երկարությունը կազմում է 341.3 կմ, որից բարեկարգված է 325.6 կմ, կոյուղի բաց թողնված կեղտաջրերի ծավալը կազմում է՝ 4.5 մլն մ^3, սպառողներին տրված ջրի ծավալները՝ 6.1 մլն մ^3 [http://armstat.am/file/doc/99500083.pdf]: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում գազաֆիկացված են 55 372 բնակարաններ և բնակելի տներ, որը կազմում է մարզի բնակարանների և բնակելի տների 73.7%-ը և ՀՀ-ի 8.7%-ը:

Աղյուսակ 9. Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, (մ^2)

	Ընդամենը	այդ թվում՝ համայնքներում	
		քաղաքային	գյուղական

	2013	2014	2015	2013	2014	2015	2013	2014	2015
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	30.9	31.4	31.6	26.2	26.7	26.9	39.0	39.5	39.8
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	**40.0**	**40.5**	**41.4**	**34.6**	**34.1**	**35.2**	**47.5**	**49.5**	**50.0**
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	38.4	39.7	40.2	37.2	38.5	38.8	40.1	41.6	42.1

Աղբյուրը՝ http://armstat.am/file/doc/99500083.pdf, http://armstat.am/file/doc/99500273.pdf

Աղյուսակ 10. Աղքատության մակարդակը

	2012		2013		2014		2015	
	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ	Աղքատ	որից՝ ծայրահեղ աղքատ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ	**46.0**	**5.5**	**45.9**	**4.0**	**44.2**	**3.8**	**45.3**	**3.9**
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	38.7	3.4	38.6	2.6	36.4	3.0	36.2	2.8
ՀՀ միջին	32.4	2.8	32.0	2.7	30.0	2.3	29.8	2.0

Աղբյուր՝ http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

112. Անվանական սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով.

1) Գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 41982 դրամ,
2) Բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ՝ 32452 դրամ,
3) Կենսաթոշակառուներով տնային տնտեսություններ՝ 41947 դրամ,
4) Երեք և ավելի երեխաներ (0-4տ) ունեցող տնային տնտեսություններ՝ 27077 դրամ,
5) Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 45406 դրամ,
6) Հինգ տարեկան և ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ՝ 34944 դրամ:

113. Աղքատության մակարդակը ՀՀ Շիրակի մարզում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է 0.7%-ային կետով, որը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից 15.5%-ային կետով, իսկ ՀՀ Լոռու մարզում՝ նվազել է 2.5%-ային կետով, որը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից 6.4%-ային կետով [http://www.armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf]:

114. Ծայրահեղ աղքատության մակարդակը ՀՀ Շիրակի մարզում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է 1.6%-ային կետով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 1.9%-ային կետով, իսկ ՀՀ Լոռի մարզում 2015թ-ին 2012թ-ի համեմատ նվազել է 0.6%-ային կետով, որը բարձր է հանրապետական միջին ցուցանիշից 0.8%-ային կետով:

115. **Առողջապահական ծառայությունների մատչելիություն:** ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործում են թվով 33 բժշկական կազմակերպություններ, որոնցից 9 հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ և թվով 21 առողջության առաջնային պահպանման ամբուլատոր հաստատություններ, <<Արյան փոխներարկման կայան>>ՓԲԸ, <<Գյումրու շտապ բուժական օգնության կայան>>ՓԲԸ և <<Գյումրու պաթոլոգանատոմիական լաբորատորիա>> ՓԲԸ:

116. Բժշկական կազմակերպությունների կողմից 10000 բնակչի հաշվով սպասարկումն իրականացվում է 23.4 բժշկի և 57.4 միջին բժշկական անձնակազմի օգնությամբ:

117. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման նպատակով ՀՀ պետական բյուջեից ՀՀ Շիրակի մարզի բժշկական կազմակերպություններին կատարված հատկացումներն 2014թ.՝ 3720 789.1, 2015թ.՝ 4 052 981.7 և 2016թ.՝ 4 229 448.5:

Գծապատկեր 14. 2013-2015 թվականներին մարզային ենթակայության բժշկական կազմակերպություններ ում աշխատողների թվաքանակը և մահճակալների քանակը



Աղյուսակ 11. ՀՀ Շիրակի մարզի առողջության առաջնային պահպանման օղակում գրանցված հաճախումների համեմատական տվյալներ ՀՀ Լոռու մարզի հետ, մարդ

Մարզ	2012	2013	2014
ՀՀ Շիրակի մարզ	**814400** **3.2**	**800600** **3.2**	**843600** **3.4**
ՀՀ Լոռու մարզ	887400 3.8	856800 3.7	863400 3.8

Գծապատկեր 15. Այլ եկամուտների 2014-2016թթ. դինամիկան ունի հետևյալ պատկերը



118. 2014-2016 թթ. ընթացքում մարզի ծննդատներում գրանցված ծնունդները՝ 2014թ. 3 966, 2015թ.՝ 3 671 և 2016թ. 3 404:

119. **Մշակութային մատչելիություն:** ՀՀ Շիրակի մարզում գործում է մշակութային գործունեություն ծավալող 173 կազմակերպություն՝ 3 ԲՈՒՀ-ի մասնաճյուղ, 2 քոլեջ, 28 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, 95 գրադարան, 1 դրամատիկական թատրոն, 1 տիկնիկային թատրոն, 1 կինոթատրոն, 9 թանգարան, 45 մշակույթի կենտրոն (տուն), 2 պատկերասրահ, 5 արտադպրոցական կենտրոն, 5 նվագախումբ:

120. Մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում և արտադպրոցական մշակութային հաստատություններում սովորում է 3 893 աշակերտ:

121. **Սպորտ:** ՀՀ Շիրակի մարզում գործում են մարզական ուղղվածության 41 կազմակերպություն, այդ թվում՝ 1 մարզական քոլեջ, 32 մարզադպրոց, 2 մարզական ակումբ, մարզական հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների 4 մասնաճյուղ և համայնքային կենտրոնների 2 մարզական բաժանմունք:

122. Նշված մարզական կազմակերպությունները և մասնաճյուղ-խմբերը գործում են մարզի 3 քաղաքային և 24 գյուղական համայնքներում: 27 մարզաձևերից գործող 785 խմբերում ընդգրկված 7147 մարզիկ-մարզուհիների հետ պարապում են 453 մարզիչներ:

123. ՀՀ հավաքական թիմերի կազմերում <<Մրցաշրջան-2016>>-ի օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի պաշտոնական առաջնություններին մասնակցել են մարզի 101 ներկայացուցիչներ, որոնք նվաճել են 53 մեդալ, այդ թվում՝ 10 ոսկե, 22 արծաթե և 21 բրոնզե:

3.11. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

124. ՀՀ Շիրակի մարզի **մթնոլորտային օդի** որակը հիմնականում պայմանավորված է ասֆալտի և բետոնի գործարանների, ավտոտրանսպորտի և հանքարդյունաբերության արտանետումներով, ինչպես նաև բնակչության կողմից ձմռան ամիսներին զանազան քիմիական բաղադրության նյութերի այրմամբ:

Աղյուսակ 12. 2011-2015թթ. արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի համեմատական բնութագիրը

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Հայաստանի Հանրապետություն	114 600.5	117 412.2	119 693.7	128 400.6	128 915.9
ՀՀ Շիրակի մարզ	**2 985.1**	**1 987.6**	**4 374.5**	**1 798.6**	**1 251.3**
ՀՀ Լոռու մարզ	39 678.0	40 540.3	42 672.4	43 932.5	46 865.4

125. Ինչպես ցույց են տալիս աղյուսակում բերված տվյալները մարզի օդային ավազանի վիճակը համեմատաբար բարվոք է, սակայն վերջինիս առավել բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել փողոցների բարեկարգման և կանաչ տարածքների ընդլայնման, ինչպես նաև գազիֆիկացման աշխատանքներ, հանքարդյունաբերական կազմակերպություններում անհրաժեշտ է ներդնել փոշու կլանման նոր տեխնոլոգիաներ: Օդային ավազանի որակի վրա զգալի ազդեցություն կարող էին ունենալ անտառային տարածքները, սակայն ՀՀ Շիրակի մարզը, հանդիսանում է հանրապետության ամենասակավանտառ մարզը: Անտառապատկան շուրջ 4 405.3 հա տարածքներից ներկայումս տնկարկներ կան ընդամենը 2 033 հա-ի վրա: Վերջին տարիներին մարզում հիմնվել է պետական ֆոնդի շուրջ 160 հա նոր անտառազանգված, իսկ համայնքներում ավելի քան 40 հա համայնքային անտառ:

126. **Ջրային ավազան:** Վերջին տարիներին մարզում իրականացվել են ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման մեծ ծավալի աշխատանքներ, որի արդյունքում զգալիորեն կրճատվել են ջրային ռեսուրսների անհարկի կորուստները: Զգալի աշխատանքներ են իրականացվել մարզի ջրամբարների վերանորոգման, պատվարների ամրացման (Թավշուտ, Կառնուտ, Վարդաքար) ուղղությամբ: Ընթացքի մեջ են Կապսի ջրամբարի կառուցման աշխատանքները, որոնց առաջին փուլում պլանավորվել է կուտակել 25 մլն մ^3 ջուր: ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի N 240-Ն որոշմամբ հաստատվել է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները: Սակայն ջրային ռեսուրսների պահպանության և արդյունավետ օգտագործման բնագավառներում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է վերագործարկել կամ նորովի կառուցել կեղտաջրերի մաքրման Գյումրու կայանը, Մանթաշի ջրամբարին և հարակից տարածքին շնորհել բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ, մարզի հանքային ջրաղբյուրների օգտագործման համար ստեղծել բարենպաստ բիզնես միջավայր: Գյումրի քաղաքի համար անհրաժեշտ են՝

1) կոյուղաջրերի կենսաբանական մաքրման կայանի հիմնանորոգում,
2) ջրային ինժեներական կառուցվածքների վերանորոգում,

3) փողոցների ջրահեռացման ցանցի հիմնանորոգում՝ հեղեղման ռիսկերից խուսափելու համար,
4) դրենաժային համակարգի ավելացում,
5) կոյուղաջրերի հեռացման համակարգի վերանորոգում:

127. **Հողեր, կենսաբազմազանություն, պահպանվող տարածքներ:** Վերջին տարիների մոնիտորինգային դիտարկումները ցույց են տալիս, որ մարզի հողային ռեսուրսների գրեթե 40%-ը տարբեր աստիճանի էռոզացված են, որը, բացի բնակլիմայական անբարենպաստ պայմաններից, հետևանք է նաև ոչ կանոնակարգված գյուղատնտեսական աշխատանքների (գերարածեցում, ոռոգման համակարգերի անբարեկարգ վիճակ, հեղեղումների, ճահճացման դեմ պայքարի և ցանքաշրջանառության բացակայություն): Հողերի բարելավման նպատակով մարզի շուրջ երկու տասնյակ համայնքների արոտավայրերում և խոտհարքներում իրականացվել են ջրարբիացման և բարելավման (քարհավաքի, հարթեցման, խոտաբույսերի ցանքի) աշխատանքներ, կանոնակարգվել են հեռագնա ալպիական արոտավայրերում արածեցման գործընթացները, որոնց արդյունքում զգալիորեն կրճատվել է լանջային էրոզիան:

128. Որոշակի միջոցառումներ են իրականացվել նաև էրոզիայի դեմ պայքարի ուղղությամբ մարզի Սարալանջ և Փոքր Մանթաշ համայնքներում, որտեղ հիմնվել է շուրջ 30 հա պաշտպանիչ անտառաշերտ: Հողերի, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանության համար կարևոր նշանակություն ունեցավ <<Արփի լիճ>> ազգային պարկի ստեղծումը ավելի քան 21 039.3 հա-ի վրա: Արփի լճին և նրա շրջակա ջրաճահճային, մերձալպյան և մարգագետնատափաստանային էկոհամակարգերին <<Բնության հատուկ պահպանվող տարածքի>> կարգավիճակի շնորհումը մեծ նշանակություն ունեցավ տարածաշրջանային էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական ուրույն բազմազանության պահպանության, բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործման ապահովման համար: Բնության առանձին օբյեկտները՝ բնության հուշարձանները մարզում 16-ն են:

129. Մարզի հողատարածքներից 1691 հա-ն դրված է ընդերքօգտագործման տակ: Այս ոլորտում ներգրավված են թվով 65 կազմակերպություններ, որոնք հիմնականում զբաղված են տարատեսակ շինանյութերի՝ բազմերանգ տուֆերի, ֆելզիտների, բազալտների, անդեզիտների, դացիտների, հրաբխային խարամների, պեմզայի և ավազների, արդյունահանմամբ: Պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով դրանցից շուրջ երկու տասնյակը չեն գործում, իսկ մնացածը գործում են թերծանրաբեռնվածությամբ: Մարզի Աշոցքի, Ախուրյանի, Արթիկի տարածաշրջաններում առկա են նաև հանքային ջրաղբյուրներ, իսկ Ամասիայի տարածաշրջանում՝ մետաղական օգտակար հանածոների հանքաերևակումներ /պղնձի, նիկելի, ոսկու, երկաթի, կոբալտի և այլն/, որոնց հետագա ուսումնասիրությունը և արդյունաբերական գնահատումը մեծ նշանակություն կունենա մարզի տնտեսության հետագա զարգացման համար: Ներկայումս ՀՀ տարածքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ ՀՀ Շիրակի մարզում՝ 1 ոչ մետաղական:

130. Հողերի պահպանության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է հողի մշակման ժամանակակից մեթոդների ներդրում, քիմիական պարարտանյութերի օգտագործման նվազեցում, լքված հանքավայրերի վերագնահատում և տարածքների վերականգնում (ռեկուլտիվացիա), ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ընդլայնում:

131. **Էներգաարդյունավետություն:** ՀՀ Շիրակի մարզը մեկն է Հայաստանի Հանրապետության այն մարզերից, որտեղ առկա է վերականգնվող էներգետիկայի բավականին լուրջ պոտենցիալ հիդրոէներգետիկայի, արեգակնային և հողմային էներգիայի, կենսագազի ստացման և օգտագործման ոլորտներում: Մարզում գործում են թվով 8 ՓՀԷԿ-եր, ուսումնասիրությունների փուլում է գտնվում հողմային էներգիայի օգտագործման հնարավորությունը Քարախաչի լեռնանցքում:

132. Վերջին մեկ-երկու տարիների ընթացքում մարզում լուրջ առաջընթաց է գրանցվել արեգակնային էներգիայի օգտագործման ոլորտում: Միջազգային ծրագրերի աջակցությամբ

մարզում իրականացվել են արեգակնային էներգիայի կիրառմամբ ավելի քան երկու տասնյակ տարբեր ծրագրեր՝ արևային էլեկտրական, տաք ջրամատակարարման արևային համակարգ, Էներգաարդյունավետ փողոցային լուսավորություն, ջերմոցի ջեռուցման արևային օդատաքացուցիչ համակարգ, չորանոց, կաթիլային ոռոգման համակարգ և այլն: Մարզի Բասեն համայնքում իրականացվում է կենսազանգվածից գազ ստանալու ծրագիր:

133. ՀՀ կառավարության ծրագրով զբոսաշրջությունը համարվել է ոլորտային տնտեսական զարգացման գերակա ուղղություններից մեկը: Ծրագրի համաձայն նախատեսվում է 2017թ. ընթացքում մշակել զբոսաշրջության վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքները զբոսաշրջության վայր դարձնելու ծրագիր: Դրան համահունչ մշակման փուլում են գտնվում ՀՀ Շիրակի մարզի <<**Ախուրյանի կիրճ**>> և <<**Ջաջուռի լեռնանցք**>> էկոտուրիստական կենտրոնների, ինչպես նաև <<**Մարմաշենի ձոր**>> պատմամշակութային և էկոտուրիստական կենտրոնի ստեղծման ծրագրերը:

134. **Էներգախնայողություն:** ՀՀ Շիրակի մարզում ՀՀ կառավարությունը մի շարք միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ համատեղ (Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (ՀՎԷԷՀ), Քաղաքապետների դաշինք և այլն) հանրային նշանակության օբյեկտներում իրականացրել և շարունակում է իրականացնել էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում նախատեսվում է էապես կրճատել վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ:

135. ՀՎԷԷՀ «Էներգախնայողության ծրագրի» շրջանակներում իրականացված աշխատանքներ՝

1) Արթիկի փողոցային լուսավորություն,
2) Ախուրյանի փողոցային լուսավորություն,
3) «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում էներգախնայողության միջոցառումներ:

3.12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

136. Մարզպետարանն ապահովում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, մարզային ենթակայության կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպումը:

137. ՀՀ Շիրակի մարզպետարանի թվով 164 հաստիքային միավորները գրեթե ամբողջությամբ զբաղեցված են, դրանց 84.1%-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ են, որոնցից 76%-ի զբաղեցնելու համար օրենսդրությամբ պահանջվում է ունենալ առնվազն բարձրագույն կրթություն:

138. Կառուցվածքային ստորաբաժանումների թիվը 15 է, այդ թվում՝ 6 վարչություններ, 1 քարտուղարություն, 8 առանձին գործող բաժիններ և 5 առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ:

139. 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքապետարանների հաստիքային միավորների թիվը կազմել է 1 647, այդ թվում՝ համայնքային ծառայության պաշտոններ 611: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2016 թվականի հունիսի 17-ին կատարված փոփոխություններով պայմանավորված՝ մարզի Աշոցքի և Ամասիայի նախկին վարչական շրջանների թվով 44 համայնքներ խոշորացվել են 4 համայնքային փնջերում:

140. Մարզի 79 համայնքների ղեկավարներից 2-ը կին են, նրանցից 50-ն ունեն բարձրագույն կրթություն, 17-ը՝ միջին մասնագիտական, 11-ը՝ միջնակարգ և 1-ը՝ 8-ամյա կրթություն:

141. Համայնքներում տեղադրված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր (ՀԿՏՀ), որոնք համալրված են ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն իրականացնելու հնարավորություններով: Ներկայում մարզի թվով 56 համայնքներ արդեն միացված են «Mulberry» համակարգին և աշխատակազմերի փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային եղանակով: Շարունակական բնույթ ունեն աշխատակազմերի համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացները: Գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով համայնքները սերտորեն համագործակցում են «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի հետ: Մարզի բոլոր համայնքներն ապահովված են համակարգիչներով, բոլոր համայնքապետարաններում առկա է ինտերնետային կապ և էլեկտրոնային հասցեներ: Ինտերնետային պաշտոնական կայքեր են տեղադրված մարզի 3 քաղաքային և 24 գյուղական համայնքներում, ապահովվել է դրանց անխափան շահագործումը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով:

142. Մեծ թվով համայնքներ ունեն համագործակցության փորձ տեղական և միջազգային կազմակերպությունների, բիզնես ներկայացուցիչների, մասնավոր ներդրողների, ՀԿ-ների հետ՝ համատեղ իրականացված ծրագրերի, ինչպես նաև կազմակերպված սեմինարների, խորհրդատվական-ուսուցողական հանդիպումների շրջանակներում: Մարզի տարածքում գործող ՀԿ-ները 350 են, որոնք կազմում են Հանրապետությունում գրանցված ՀԿ-ների 7.5%-ը:

143. Տեղեկատվության փոխանակման, կազմակերպական բնույթի հարցերի քննարկման և ընթացիկ խնդիրների լուծման գործում ապահովվել է ՔՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությունը գործող մշտական և ժամանակավոր խորհրդների ու հանձնաժողովների աշխատանքներին, մասնավորապես ՔՀԿ-ների ներկայացուցիչներ են ընդգրկվել ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում, աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմում, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովում, գենդերային հարցերով զբաղվող, զբաղվածության աջակցության, ինչպես նաև մարզային այլ հանձնաժողովներում:

IV. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (SWOT)

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	
• Գյումրու տեխնոպարկում գործող 29 ընկերությունների առկայություն, • Գյումրին որպես քաղաքային զարգացման աճի բևեռ, մարզի կրթական և առողջապահական ու մշակութային կենտրոն, • Գյուղատնտեսական հողերի մեծ ծավալներ	• Բնական ռեսուրսների կառավարման արդյունավետության ոչ բավարար մակարդակ • Բնակչության ծերացումը և ծնելիության ցածր մակարդակը • Սակավ անտառային տարածքներ • Սակավ կանաչապատ տարածքներ, • Արտագաղթի և ծնելիության ցածր մակարդակի պատճառով բնակչության թվի նվազում (3.5% 2012թ. նկատմամբ), • Բազմաբնակարան շենքերի պահպանման ֆինանսավորման բացակայություն, • Շարունակական ժողովրդավարական բացասական միտումներ, հատկապես արտագաղթ
2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	
• Տրանսպորտային երկու տեսակների (ավտոմոբիլային, երկաթուղային) առկայությունը մարզում	• Տրանսպորտային միջոցների մաշվածություն,
3. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	
• Զարգացած տարածքաշրջանային և տեղական ավտոճանապարհային ցանց, • Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայություն, • Տրանսպորտային երեք տեսակների հասանելիությունը՝ օդային, ավտոմոբիլային, երկաթուղային • Մարզում համայնքի գազաֆիկացվածության բավարար աստիճան (52.1%), • Հողմաէներգետիկ պաշարների քարտեզագրված լինելը,	• Ճանապարհային ենթակառուցվածքների մաշվածության բարձր աստիճան, • Կոշտ կենցաղային թափոնների կառավարման անբավարար մակարդակ, • Ջրամատակարարման և ջրահեռացման ստորգետնյա ցանցի ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր աստիճան, քահրիզների առկայություն,
4. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
• Գյուղատնտեսական մթերքի վերամշակող կազմակերպությունների առկայությունը մարզում	• Մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցածր մակարդակ, միջին հանրապետական ցուցանիշի 52%, • ՀՆԱ կախվածություն՝ գյուղատնտեսության ճյուղից, • Գյուղատնտեսական արտադրանքի բարձր ինքնարժեքը ցածր արդյունավետության պատճառով, • Ընտանեկան եկամուտների ցածր մակարդակ միջին հանրապետական ցուցանիշի 73%, • Քաղաքային բնակչության գործազրկության բարձր մակարդակ,
5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
• Աշխատանքի շուկայի առկայություն՝ SS ոլորտ,	• Տնտեսապես ակտիվ բնակչության ցածր մակարդակ, հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 6.4%-ով, • Աշխատատեղերի պակաս և գործազրկության բարձր մակարդակ (19%), • Աշխատաշուկայի պահանջներին անհամապատասխան կրթություն ունեցող երիտասարդների մեծ թիվը •
6. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	
• Գյուղատնտեսական մթերքների վերամշակման	• Ոռոգելի վարելահողի սակավություն, արոտների

կազմակերպու-թյունների բավարար քանակություն, • Գյուղատնտեսական մթերքների արտադրության պարբերաբար աճ, • Վարելահողերի, արոտների և խոտհարքների նպատակային օգտագործման բարձր մակարդակ, • «Գյումրու սելեկցիոն կայան» ՓԲԸ առկայությունը,	գերակշռող մասի ջրարբիացման բացակայություն, • Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածություն, • Գյուղատնտեսության վարման արդիական եղանակների հետ ծանոդության ցածր մակարդակ • Արտադրող-սպառող կողմերի և մեծածախ շուկայի շփման բացակայություն, • Թեթև և սննդի արդյունաբերության ոլորտների ոչ բավարար զարգացված լինելը,
7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	
• Երիտասարդ, կրթություն ունեցող անձանց մեծ թիվ, • Ընդհանուր կրթության հասանելիություն և թվով 6 պետական ԲՈՒՀ-ի տարբեր մասնագիտ. ուղղվածության առկայություն, • Համընդհանուր անվճար տասներկուամյա (ներառյալ մասնագիտական) կրթության մատչելիություն/հասանելիություն, • SS ոլորտի հմտությունների զարգացում դպրոցական տարիքից (Գյումրի), • Նախադպրոցական հաստատությունների, նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առկայություն,	• Մասնագիտական կրթության անհամապատաս-խանությունը աշխատաշուկայի պահանջներին, • Սահմանամերձ, բարձր լեռնային դպրոցներում մանկավարժների պակաս, նյութատեխնիկական, լաբորատոր գույքի մաշվածություն, մարզագույքի և սարքավորումների սակավություն, • Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաներ,
8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	
• Տրամադրվող սոցիալական ծառայությունների որակ և ծրագրերի բազմազանություն, • Բժշկական կազմակերպությունների հասանելիություն և մատչելիություն, • Երաժշտական և արվեստի դպրոցների, այլ մշակութային օջախների ու սպորտային կազմակերպությունների առկայություն,	• Աղքատության բարձր մակարդակ, • Բժշկական կազմակերպություններում բժշկական կադրերի անբավարար հագեցվածություն, շենքային պայմանների անմխիթար վիճակ, ժամանակակից սարքավորումներով հագեցվածության ոչ բավարար վիճակ և ֆիզիկական մաշվածություն, • Մարզի տարածքում գտնվող հասարակական նշանակության՝ կրթության, մշակույթի և այլ վարչական շենք շինությունների հարմարեցվածության բացակայություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար,
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	
• Ջրային պաշարների ապահովվածություն, • Օդային ավազանի բավարար վիճակ, • Հանրային ենթակառուցվածքի բարելավում կոշտ թափոնների, կեղտաջրերի կառավարման համար,	• Բնության հատուկ պահպանվող տարածքների պակաս, • Արդյունաբերական և կոշտ թափոնների վատ կառավարում, • Չգործող կեղտաջրերի մաքրման կայաններ, • Ջրային ռեսուրսների թույլ կառավարում, • Լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողատարածքների առկայությունը, • Օբյեկտներում (շենքեր շինություններ, փողոցային լուսավորություն և այլն) էներգախնայողության, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկ ռեսուրսներից էլեկտրաէներգիայի արտադրության (մասնավորապես՝ արևային և հողմային) ցածր մակարդակ,
10. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
• ՀԿ և միջազգային կառույցների բարձր ներգրավվածության մակարդակ:	• ՏԻՄ-երի մարդկային կարողությունների անհամաչափ զարգացվածություն, • Տեղական հարկերի ու վճարների հավաքագրման դժվարություններ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**
1. ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ	

• Բերրի վարելահողերի, խոտհարքների և արոտների առկայություն, • Հարուստ ջրային ռեսուրսների առկայություն, • Շինանյութերի (տուֆ, բազալտ) պաշարների առկայություն, • Աշխատունակ բնակչության մեծ տեսակարար կշիռ, • Գյումրի քաղաքի «Կումայրի» պատմաճարտարա-պետական արգելոց-թանգարանի առկայություն, • Մարզի աշխարհագրական դիրքը՝ Երևանի և Վրաստանի հետ կապված է միջպետական ճանապարհների, երկաթուղային տրանսպորտի և միջազգային օդանավակայանի առկայություն, • Մարզի չօգտագործվող արդյունաբերական տարածքների օգտագործում,	• Սողանքային երևույթների առկայություն, • Վթարային շենքերի առկայություն • Տարածքի սեյսմիկ անկայունություն, • Բնակլիմայական խիստ պայմաններ՝ կարկտահարության, ցրտահարության, ուժեղ քամիների ու երաշտի հավանակություն, • Սեյսմիկ բարձր գոտի, Շարունակական ժողովրդավարական բացասական միտումներ, հատկապես արտագաղթ,
2. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	
• Միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանի և երկաթգծի առկայություն, ինչպես նաև հյուսիս-հարավ միջպետական ճանապարհի մարզով անցնելը, • Մարզի կախվածության բարձր աստիճանը ավտոմոբիլային ուղևորա և բեռնափոխադրումներից • Ներդրումների ներհոսքի հնարավորություն հյուսիս-հարավ միջպետական ճանապարհի և միջազգային օդանավակայանի արդյունավետ շահագործման շնորհիվ,	• Պատահարների աճի միտում,
3. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ	
• Գյումրի քաղաքում կեղտաջրերի մաքրման կայանի վերագործարկման հնարավորություն,	• Հանրային ենթակառուցվածքի հետագա անկում ոչ բավարար ֆինանսավորման պատճառով, • Համայնքներում կոյուղաջրերի մաքրման կայանների բացակայություն,
4. ՆԵՐՔԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
• Ազատ տնտեսական գոտի ստեղծելու հնարավորություն, • Կապսի ջրամբարի կառուցում, որը հնարավորություն կտա մարզի ոռոգելի տարածքների ընդարձակմանը, հետևաբար նաև գյուղատնտեսության զարգացման,	• Տնտեսական անկում ազգային և միջազգային մակարդակով՝ ճգնաժամ, • Կախվածությունը ավանդական գյուղատնտեսությունից,
5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
• Արդյունավետ զբաղվածության խթանմանը ուղղված ծրագրեր, • SS ոլորտի աճ,	• Աշխատանքային միգրացիա,
6. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	
• Զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, • Գյուղ արտադրական ծավալների ավելացման հնարավորություն, • Գյուղատնտեսության վարման նոր եղանակների, տեխնոլոգիաների առկայություն և հասանելիություն • ՓՀԷԿ-երի կառուցման համար ջրային պաշարների, հողմային և արևային էլ. էներգիայի արտադրության համար բնակլիմայական բարենպաստ պայմանների առկայություն, • Զբոսաշրջության զարգացման հնարավորություն՝ <<Կումայրի>> պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի դերը, պատմամշակութային արժեքների և գեղատեսիլ վայրերի (<<Արփի լիճ>> ազգային պարկ, Ախուրյանի կիրճ» և «Ջաջուռի լեռնանցք» էկոտուրիստական կենտրոնների, ինչպես նաև	• Գյուղական արտադրանքի գներից բարձր կախվածություն և մրցակցություն այլ տարածաշրջանների հետ, • Բնակլիմայական պայմանների ազդեցությունը գյուղ մթերքների վրա, • Գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմի բացակայություն,

«Մարմաշենի ձոր» պատմամշակութային և էկոտուրիստական կենտրոնի ստեղծման նախագծերը) առկայություն,	
7. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ	
• Հեռաուսուցման կրթական ծրագրերի հնարավորություն, • SS ոլորտի խթանման ազգային-կրթական քաղաքականության առկայություն,	• Կրթական արդիականացմանը ուղղված ներդրումների պակաս, • Բարձր տեխնոլոգիաների ոլորտում որակավորում ունեցող մասնագետների մեծ պահանջարկ տարածաշրջանից դուրս՝ ուղեղների արտահոսք,
8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՈՒՄ	
• Պետական, տեղական և միջազգային ծրագրերի հնարավորություն,	• Տնտեսական վիճակի վատթարացում,
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	
• Ջրային պաշարների ապահովվածություն, • Ոչ մետաղական հանքավայրերի առկայությունը, • Ազգային պարկ պահպանվող տարածքների ընդլայնում, • Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման լայն հնարավորություններ (արև, քամի, երկրաջերմային էներգիա), • Հանրային ենթակառուցվածքի բարելավում կոշտ թափոնների, կեղտաջրերի կառավարման համար, • Հանրային և բնակելի սեկտորում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների հնարավորություն, • Վերականգնվող էներգետիկայի ոլորտում միկրոկայանների մասսայականացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորություն,	• Պարբերաբար կրկնվող երաշտներ կլիմայի փոփոխության հետևանքով, • Անտառային տարածքների սակավության պատճառով չորային կլիմա, • Լքված, դադարեցված հանքավայրերի և դրանց տարածքներում խախտված հողերի առկայություն,
10. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
• Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրեր (ՏԻՄ, ՀԿ, մասնավոր հատված և պետական մարմիններ), • ՔՀԿ-ների, գործարար միությունների հետ համագործակցությունն ապահովող ծրագրեր, բարեփոխումների գործընթացներով ընթացիկ կամ պլանավորված համայնքային կարողությունների զարգացում, • Համայնքային խոշորացման արդյունքում կավելանան բնակչությանը ծառայություններ մատուցելուն ուղղված ֆինանսական միջոցների չափերը:	• Համայնքային մակարդակներում կարողությունների թերի զարգացում և ֆինանսական փոքր հնարավորություններ, հատկապես փոքր համայնքներում:

V. ՏԵՍԼԱԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 ՏԵՍԼԱԿԱՆ

144. Լինել Հայաստանի Հանրապետության առաջատար մարզ՝ ապահովելով համայնքներում կայուն սոցիալ-տնտեսական հնարավորություններ, ունենալ մրցունակ տնտեսություն և զբաղվածության բարձր մակարդակ:

5.2 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

145. ՀՀ Շիրակի մարզի ռազմավարական նպատակները, 2017-2025 զարգացման ռազմավարությունը հիմնված է մարզի իրավիճակի գնահատման, ամենամեծ ուժեղ կողմերի և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վրա, ինչպես ներկայացված է փաստաթղթի վերլուծական մասում:

146. Ռազմավարական ուղղությունների տրամաբանությունն ապահովված է՝ համատեղելով ընդհանուր նպատակներին (հորիզոնական) և գերակա թեմաները/ոլորտները (ուղղահայաց), և դրանք կապված են ազգային-ռազմավարական փաստաթղթերին, ինչպես ներկայացված է ստորև:

Աղյուսակ 13. ՀՀ Շիրակի մարզի ռազմավարական նպատակներ և գերակայություններ

ՄԶՌ ռազմավարական նպատակներ	**Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2016-2025թթ.**
1. Բարձրացնել ՀՀ Շիրակի մարզի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել տնտեսությունը՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, 2025թ.-ի դրությամբ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակի, ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի և ակտիվ կազմակերպությունների աճ առնվազն 10%-ով՝ համեմատած 2015թ.-ի հետ: 2025թ.-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը:	Բոլոր մարզերում մրցունակության բարձրացում՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, թույլ տալով առավել ընդարձակ ինտեգրումը ազգային ու միջազգային տնտեսությունների հետ (2025թ.-ի դրությամբ բոլոր մարզերում միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների, թվաքանակը կաճի առնվազն 10%-ով՝ համեմատած 2014թ.-հետ:
2. Մարզի շարունակական, համապարփակ ու կայուն տնտեսական աճ և համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքներին, եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացում և մինչև 2025 թվականը 10%-ային կետով աղքատության մակարդակի նվազեցում:	Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրսների կայուն օգտագործման վրա: (2025թ.-ի դրությամբ առանձին վերցված յուրաքանչյուր մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 70%-ից ցածր կգտնվի մարզերի բնակչության ոչ ավել, քան 30%-ը:)
3. Մարզային զարգացման քաղաքականության	Տարածքային զարգացման քաղաքականության ու

իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում ու մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում՝ մինչ 2025 թվականը մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 11-15 համայնքապետարաններով, 2016թ.-ի 79-ի փոխարեն:	գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով: (2017թ.-ին ՀՀ-ն կունենա տարածքային զարգացման քաղաքականության իրականացման մեկ ընդհանուր Տարածքային զարգացման գործառնական ծրագիր (ՏԶԳԾ), որը հիմք կհանդիսանա, ՏԿԶՆ բյուջետային ծրագրերի նախապատրաստման և տարածքային զարգացման նպատակներով, արտաքին աղբյուրներից բյուջետային աջակցության ստացման համար:)

1. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում	2. Գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում	3. Փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում:
ՄԶՌ հիմնական գերակայություններ		
Արդյունաբերության և արտահանման խթանում, զբոսաշրջություն և ՏՀՏ ոլորտ, գյուղատնտեսության ու գյուղական տարածքների արդիականացում, սննդի արդյունաբերություն և ՓՄՁ-ների ստեղծում:		
Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն 2014-2025թթ.		

5.3 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

147. **Ռազմավարական նպատակ 1:** Բարձրացնել ՀՀ Շիրակի մարզի մրցունակությունը և դիվերսիֆիկացնել տնտեսությունը՝ հիմք ընդունելով վերջիններիս ներքին պոտենցիալը, 2025թ.-ի դրությամբ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողների թվաքանակի, ոչ գյուղատնտեսական ֆորմալ աշխատատեղերի և ակտիվ կազմակերպությունների աճ առնվազն 10%-ով՝ համեմատած 2015թ.-ի հետ: 2025թ.-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կգերազանցի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջին հանրապետական ցուցանիշի 60%-ը:

148. **Հիմնավորում:** ՀՀ Շիրակի մարզի տնտեսությունը ունի հստակ արտահայտված միաճյուղ զարգացում (2015թ. տնտեսության 50% կազմել է գյուղատնտեսությունը): Տնտեսության նման կառուցվածքը իր մեջ պարունակում է ռիսկեր, և անհրաժեշտություն է առաջանում խթանել տնտեսության այնպիսի ճյուղերի զարգացումը, որոնք ուղղակիորեն կապված չեն գյուղատնտեսության հետ, այսինքն՝ իրականացնել տնտեսության դիվերսիֆիկացիա: Այս նպատակը համահունչ է ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության 1-ին և 2-րդ նպատակների հետ:

149. **Ռազմավարական նպատակ 2:** Մարզի շարունակական, համապարփակ ու կայուն տնտեսական աճ և համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքներին, եկամտի

աղբյուրների դիվերսիֆիկացում և մինչև 2025 թվականը 10%-ային կետով աղքատության մակարդակի նվազեցում:

150. **Հիմնավորում:** Կարևորելով ՓՄՁ-ի դերը մարզի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում: ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում մարզի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում, ՀՀ Շիրակի մարզում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ արտահայտված երկրի միջինի տոկոսային հարաբերությամբ 2015թ. կազմել է 52%: Մարզի կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ-ի զարգացումն է կոչված ապահովելու մարզի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն: Այս նպատակը համահունչ է ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության 1 և 2-րդ նպատակի հետ:

151. **<u>Ռազմավարական նպատակ 3</u>:** Մարզային զարգացման քաղաքականության իրականացման ընթացքում մարզային և տեղական դերակատարների ակտիվության բարձրացում ու մարդկային կապիտալի կառավարման հմտությունների բարելավում՝ մինչ 2025 թվականը մարզի ամբողջ տարածքը կկառավարվի խոշորացված 11-15 համայնքապետարաններով, 2016թ.-ի 79-ի փոխարեն:

152. **Հիմնավորում:** ժամանակակից տնտեսության զարգացման մեջ անժխտելի է որակյալ մարդկային կապիտալի և դրա արդյունավետ կառավարման առանցքային դերը: Բնորոշվելով որպես անհատի՝ եկամուտ ստեղծելու կարողությունների ամբողջություն մարդկային կապիտալը տնտեսության և՛ մակրո, և՛ միկրո մակարդակներում դիտվում է որպես կառավարման արդյունավետության բարձրացման առաջնային գործոն: Աճող գլոբալ մրցակցության պայմաններում ազգային մրցունակության գլխավոր գործոններ են դառնում ոչ թե հողը, կապիտալը և բնական ռեսուրսները, ինչպես ընդունված էր դասական տնտեսագիտության մեջ, այլ՝ բարձր որակավորմամբ մարդկային ռեսուրսներն ու գիտական հենքը: Այս նպատակը համահունչ է ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարության 3-րդ նպատակի հետ:

153. **<u>Գերակա խնդիր 1</u>:** Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում:

154. **Հիմնավորում:** ՀՀ Շիրակի մարզում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարում է կարևորագույն օղակներից մեկը: Այս շրջանակում իրականացվել են տարբեր ծրագրեր, որոնք մեծապես նպաստել են ոլորտի ընդհանուր աճին: Վերջին տարիներին ոլորտում գրանցվել է նոր ընկերությունների կտրուկ աճ՝ թե տեղական նորաստեղծ և թե արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերի տեսքով: Ընդ որում, արտասահմանյան ընկերությունների 90%-ն մարզում իր գործունեությունը սկսել են վերջին մի քանի տարվա ընթացքում: Գործող ՏՀՏ ընկերությունների թիվը հասել է շուրջ 30-ի, որոնք ունեն լաբորատորիաներ, կրթական կենտրոններ, բիզնես ենթակառուցվածքներ:

(ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր,
ՀՀ 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարություն)

155. **<u>Գերակա խնդիր 2</u>:** Գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում:

156. **Հիմնավորում:** Մարզի տարածքի ավելի քան 78.7%-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Արդիական և զարգացած գյուղատնտեսությունը ոչ միայն հնարավորություն է տալիս զարգացնել գյուղական տարածքները, այլ նաև խթան է հանդիսանում գյուղատնտեսության հետ կապված արդյունաբերության ճյուղերի զարգացմանը և բնակչության բարեկեցության բարձրացմանը:

(ՀՀ կառավարության 2016թ. ծրագիր, ՀՀ գյուղի և գյուղատնտեսության
2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն)

157. **<u>Գերակա խնդիր 3</u>:** Փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում:

158. **Հիմնավորում:** ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

ՀՀ Շիրակի մարզը հարուստ է պատմամշակութային և հնագիտական հուշարձաններով: Այս առումով կարևորվում է Գյումրի քաղաքի <<Կումայրի>> պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի, Հառիճի և Մարմաշենի վանական համալիրների, Երերույքի տաճարի դերը, որոնք հանդիսանում են նպաստավոր պայմաններ զբոսաշրջության զարգացման համար, իսկ <<Արփի լիճ>> ազգային պարկն իր ուրույն կենսաբազմազանությամբ էկոզբոսաշրջային կլաստերի կազմակերպման լավագույն տարածքն է:

(ՀՀ կառավարության 2016թ. ծրագիր,
ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր,
ՀՀ 2016-2025թթ. կարածքային զարգացման ռազմավարություն)

VI. ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

159. Հետևյալ ՄԶՌ գերակայությունները համարվում են հստակ նպաստող ռազմավարական նպատակների իրականացմանը: Կարևորության առումով դրանք գալիս են ավելի վաղ ներկայացված գերակայություններից հետո (գերակա խնդիրներ):

Աղյուսակ 14. ՀՀ Շիրակի մարզի գերակայություններ

Թեմա	Գերակայություն	հիմնական շահառուներ	Կապը՝ պետական ռազմավարություններին և խոշոր ծրագրերին
Բնական պայմաններ	1. Բնական պաշարների և ջրային ռեսուրսների ռացիոնալ և կայուն օգտագործում	Մարզի համայնքներ, բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *- Բնակլիմայական աղետներից (երաշտ, կարկտահարություն և այլն) վնասների կանխարգելման հայեցակարգի մշակում:*
Ժողովրդագրական իրավիճակ			
Քաղաքային զարգացում	2. Գյումրու, որպես քաղաքային աճ բևեռների զարգացում,	Քաղաքային համայնքներ, բնակչություն	ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 12.12.2016թ. որոշում, Գյումրի համայնքի զարգացման ինգամյա ծրագիր 2017-2021թթ, ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *-Քաղաքային զարգացման բևեռների հիմնում, բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ:*
Տրանսպորտ, հաղորդակցում և տեղեկատվական հասարակություն			
Հանրային ենթակառուցվածքներ	3. Մարզային և տեղական տարբեր տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավում 4. Կոշտ թափոնների և կեղտաջրերի կառավարման բարելավում	Մարզի համայնքներ, բնակչություն, ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման գործընթացը կանոնակարգող օրենսդրության մշակում:*

Ներքին արտադրանք և եկամուտներ	5. Փոքր և միջին արդյունաբերական կազմակերպությունների գործունեության խրախուսում և աջակցություն, զբոսաշրջության զարգացում **(հիմնական գերակայություն)**	Մարզի համայնքներ, բնակչություն, ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ *- Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով:* ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ:* *-Զբոսաշրջության խթանում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների թվաքանակի աճ:* ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի նիստի 18-րդ կետով հավանության արժանացած << Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում
Զբաղվածություն	6. Երիտասարդ գործազրկության մակարդակի նվազում 7. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացում **(հիմնական գերակայություն)** 8. Խթանել ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը	Մարզի երիտասարդ բնակչություն	ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին>> N 442-Ն որոշում՝ *- Զբաղվածության ընդլայնում՝ որակյալ, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով:* ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Տեղական ու տարածքային մակարդակներում բիզնես միջավայրի բարելավում, ոչ գյուղատնտեսական ֆորմալ զբաղվածների և ակտիվ կազմակերպությունների թվաքանակի աճ:*
Մարզային տնտեսության կառուցվածք, հիմնական ոլորտներ	9. Գյուղատնտեսական տեխնոլոգիաների արդիականացում և գյուղական տարածքների զարգացում **(հիմնական գերակայություն)**	Մարզի բնակչություն, տնային տնտեսությունները, ակտիվ կազմակերպություններ	ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 11-ի նիստի 15-րդ կետով հավանության արժանացած <<Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը հաստատելու մասին>> N43 արձանագրային որոշում՝

			-Գյուղատնտեսական տեխնիկական վերազինման հիմնական ուղղությունների նախանշում և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացում: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-2018-2020թթ. ընթացքում տարեկան մինչև 100հա նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար համապատասխան պայմանների ստեղծում:* *-Առնվազն 45 գյուղական համայնքում ավելացված արժեք ապահովող ծրագրերի (ջերմոցներ, սառնարաններ, վերամշակման փոքր արտադրություններ, սպանդանոցներ և այլն) իրականացում:*
Կրթություն, մարդկային կապիտալ	10.Աջակցություն նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններին՝ ուսանողների արտադրական պրակտիկան մարզում կազմակերպելու, գործատու և ուսումնական հաստատություն կապը զարգացնելու, ինչպես նաև շրջանավարտներին աշխատանքի տեղավորելու նպատակով: 11.Համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության ապահովում, որը հնարավորություն է ընձեռում անձին՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության: 12. 3-5 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցողների թվաքանակի աճ:*

	որակյալ նախադպրոցական կրթության մատչելիության, ինչպես նաև 5 տարեկանների առավել ընդգրկվածության ապահովում 13. Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների խթանում		
Սոցիալական ներառում	14. Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում և աղքատության մակարդակի մեղմում	Մարզի բնակչություն, աղքատության շեմից ցածր գտնվող անձինք և նրանց ընտանիքի անդամներ	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *-Տարածքներում համաչափության բարձր մակարդակի ապահովում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենաթույլ զարգացած տարածքների ու սահմանամերձ համայնքների, ինչպես նաև ռեսուրս-ների կայուն օգտագործման վրա:*
Բնապահպանական հարցեր, էներգետիկ արդյունավետություն, կլիմայի փոփոխության հարմարվողականություն	15. Շրջակա միջավայրի պահպանություն ու էներգաարդյունավետություն	ՀՀ Շիրակի մարզի բնակչություն, զբոսաշրջիկներ, ակտիվ կազմակերպու-թյուններ	ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի 21-րդ կետով հավանության արժանացած <<ՀՀ 2017-2036 թվականների կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 49 արձանագրային որոշում՝ *- ՀՀ ողջ տարածքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման ԵՄ չափանիշներին բավարարող, ինտեգրված համակարգի ստեղծում:* ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը հաստատելու մասին>> N1060-Ա որոշման հավելվածի՝ *-Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակներում արևային համակարգերի կառուցում:* ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Շրջակա միջավայրի պահպանություն և էներգաարդյունավետություն:* ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի նիստի 11-րդ կետով հավանության արժանացած ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ

			«Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում» N41 արձանագրային որոշում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրում»՝ *- Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններ/ներդրումներ:*
Մարզային և տեղական զարգացման կարողություններ	16. Մարդկային կապիտալի կարողությունների բարելավում	Մարզի բնակչություն	ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի 24-րդ կետով հավանության արժանացած <<Հայաստանի Հանրապետության 2016-2025թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին>> թիվ 29 արձանագրային որոշում՝ *- Տարածքային զարգացման քաղաքականության ու գործելակերպերի բարելավում զարգացման պլանավորման ու իրականացման գործընթացներում՝ տարածքային ու տեղական դերակատարների առավել ակտիվ մասնակցության ապահովման միջոցով:*

VII. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

160. ՀՀ Շիրակի մարզի ռազմավարական ծրագրերը, որոնք շարունակական են և ակնկալվող, գնահատվում են ըստ հետևյալ չափանիշների՝ ռազմավարական կողմնորոշում ՄԶՌ նպատակների և գերակայությունների հետ, արժեք / օգուտհարաբերակցություն, ծրագրի իրագործելիություն: Ծրագրի գնահատման ցանկը ներկայացված է ստորև:

Աղյուսակ 15. Ռազմավարական ծրագրեր

Հ/հ	Ծրագրի անուն /թեմա	Կարճ նկարագիր	Արժեք մլն դրամ	Իրականացնող մարմին	Ժամանակահատված
1.	Խթանել տեխնոլոգիական զարգացումը ՀՀ Շիրակի մարզում	Microsoft ինովացիոն կենտրոնի աջակցությամբ Գյումրիում 200 գործազուրկներին ծրագրավորման դասընթացներ անցկացնել, որից 90 մշտական աշխատատեղ	267.8	ԵՄ աջակցությամբ (համաձայնությամբ)	2017-2018թթ.
2.	Բավրայի հնդկաձավարի արտադրամասի կառուցում	<<ՆՈՐ ՀԱՏԻԿ>> մթերող, վերամշակող, իրացնող կոոպերատիվ, որը գործելու է ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղում, որտեղ նախատեսվում է իրականացնել տարեկան շուրջ 9000տ հնդկաձավարի վերամշակում և փաթեթավորում: Գործարանը նախատեսված է երեք մարզի՝ ՀՀ Շիրակ, ՀՀ Արագածոտն, ՀՀ Լոռու, 28 կոոպերատիվի 430 անդամների համար:	213.5	FAO-ի ՄԱԿ-ի պարենի ծրագրերի իրականացման գրասենյակ, ENPARD ծրագիր (համաձայնությամբ)	Մինչև 2017թ. օգոստոս
3.	Գյումրի և Արթիկի կարի արտադրամասերի կառուցում	Երկաթգծի հիվանդանոցի շենքը վերանախագծվել է որպես կարի արտադրամաս: Արտադրամասը ապահովելու է 1500 աշխատատեղ: Տարածքում կառուցվում է նաև ուսումնական կենտրոն, որտեղ վերապատ-րաստվելու են համապատաս-խան մասնագետներ: Բացի այդ տարածքում կառուցվում է նաև 16 բնակարաններ: Դրանց մի մասը հատկացվելու է տարածքում բնակվող ընտանիքներին, իսկ մյուս մասը օգտագործվելու է որպես ծառայողական:	1030.0	<<ՍԱՍՍՏԵՔՍ>> ՍՊԸ (համաձայնությամբ)	Մինչև 2018թ.
4.	Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի կառուցում	Ծրագրի նպատակն է հազարավոր երեխաներին տրամադրել բացառիկ ուսումնական փորձառություն չորս ոլորտներում՝ թվային մեդիա, խաղերի ստեղծում, անիմացիա և կայքերի մշակում:	-	Սիմոնյան կրթական հիմնադրամ (համաձայնությամբ)	Մինչև 2018թ
5.	Կապսի ջրամբարի կառուցում	Ոռոգելի հողերի ավելացում	31500.0	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե	Մինչև 2020թ.
6.	Հյուսիս-հարավ ճանապարհային ծրագիր	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման դրամաշնորհային ծրագիր	3578.9	Եվրոպական ներդրումային բանկ/B1 (համաձայնությա	Մինչև 2019թ.

		(տրանշ 3) հատված B1 և B2		մբ), Ասիական զարգացման բանկ/B2 (համաձայնությամբ)	
7.	Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու փողոցների վերանորոգում	171.1	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Մինչև 2018թ.
8.	Կոշտ կենցաղային թափոնների կառավարում	Նպատակն է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան տարածաշրջանի Բենիամին համայնքի վարչական տարածքում կառուցել և անհրաժեշտ սարքավորումներով համալրել եվրոպական ստան-դարտներին համապատաս-խանող մարզային աղբավայր:	8400.0	Ասիական զարգացման բանկ (համաձայնությամբ)	Մինչև 2021թ.
9.	Կրթական և մշակութային հաստատություններ ի կառուցում և հիմնանորոգում	Գյումրու Օյունջանի և Կրասար համայնքի միջնակարգ դպրոցների կառուցում, Գյումրու, Սպանդարյանի և Այգաբացի համայնքներում մանկապարտեզների կառուցում	959.7	ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)	Մինչև 2018թ.
10.	<<Հայաստան ծառատունկ>> ծրագիր	ՀՀ Շիրակի մարզի թվով հիսուն համայնքներում համայնքային անտառների հիմնում շրջակա միջավայրի բարելավման նպատակով	-	<<ԷՅ-ԹԻ-ՓԻ>> բարեգործական հիմնադրամ (համաձայնությամբ)	Մինչև 2025թ.

161. Վերը նշված աղյուսակում նշված ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿ

162. ՏԶՌ համակարգումը և իրականացումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության խիստ վերահսկողության ներքո, և այլ նախարարությունների և պետական գերատեսչությունների հետ գործողությունների համաձայնեցման միջոցով:

163. Գործնականում ՏԶՌ-ն փաստացի իրականացվելու և/կամ աջակցություն է ստանալու մի շարք կառույցների կողմից.

1. Մարզային վարչակազմերի կողմից, հիմնականում՝

ա. ՏԶՌ ամբողջական իրականացման համակարգման միջոցով,

բ. Մարզի ՏԶՌ նախապատրաստման միջոցով՝ մշակում, վերանայում և փոփոխում՝ ըստ պահանջի,

գ. ՏԶՌ իրականացմանն առնչվող գործողությունների համակարգման միջոցով,

դ. ՏԶՌ իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման միջոցով,

ե. Բոլոր շահագրգիռ կողմերին ՏԶՌ իրականացման և մարզային զարգացմանն առնչվող այլ խնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման միջոցով,

զ. Տեղական կառավարական մարմիններին իրենց զարգացման ռազմավարությունների և ծրագրերի, ինչպես նաև ծրագրերի առաջարկների մշակման վերաբերյալ մասնագիտական և տեխնիկական աջակցության տրամադրման միջոցով,

է. Հասարակական միավորումներին և այլ շահագրգիռ կողմերին աջակցության տրամադրման միջոցով՝ տարածքային և տեղական զարգացմանն առնչվող ծրագրերի նախապատրաստման վերաբերյալ,

ը. Տեղական զարգացման և ծրագրերի պլանավորմանն ուղղված միջքաղաքային համագործակցության խրախուսման միջոցով,

թ. Մարզի զարգացման հնարավորությունների խրախուսման միջոցով:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, հիմնականում՝

ա. Տարածքային կառավարման և սոցիալ-տնտեսական զարգացման գործառույթների իրականացման միջոցով,

բ. Տեղական զարգացման պլանավորման և իրականացման միջոցով,

գ. Ենթակառուցվածքային և ոչ ենթակառուցվածքային ծրագրերի զարգացման և իրականացման համար ներդրումային ծրագրերի միջոցով:

3. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից՝ այլ նախարարությունների հետ համագործակցության միջոցով, հիմնականում՝

ա. Տարածքային զարգացման ամբողջական քաղաքականության մշակման միջոցով,

բ. Պետության տարածքային և սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունների հետ համահունչ ՏԶՌ իրականացման վերաբերյալ պատկերացում տրամադրելու միջոցով,

գ. Տարածքային զարգացման խթանման համար միջոցառումների իրականացման միջոցով:

164. **Ի հավելումն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.**

1) Տարածքային զարգացման համար կազմակերպում և համակարգում է ազգային ռազմավարական պլանավորման փաստաթղթերը,

2) ՏԶ պլանավորման փաստաթղթերի համար ապահովում է համապատասխան մեթոդաբանություն,

3) Պատրաստում և ՀՀ կառավարություն է ներկայացնում տարածային զարգացման ռազմավարական և գործառնական փաստաթղթերի իրականացման վերաբերյալ զեկույցները,

4) Կազմակերպում և համակարգում է ՏԶՌ-ների մոնիտորինգի և գնահատման համար անհրաժեշտ գործողությունները:

165. **Դոնորների և միջազգային ֆինանսական կառույցների կողմից**, հիմնականում ՏԶՌ իրականացման գործընթացին ֆինանսական և տեխնիկական աջակցություն տրամադրելու միջոցով:

166. **Հասարակական կազմակերպությունների կողմից,** հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, տարածքային և տեղական ծրագրերի առաջարկման և իրականացման, կենսամակարդակի բարելավմանն և աղքատության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկման և այլնի միջոցով:

167. **Մասնավոր հատվածի դերակատարների կողմից**, հիմնականում ՏԶՌ մշակման և իրականացման գործընթացին ակտիվ մասնակցության, իրենց սեփական ներդրումային և ընդլայնման ծրագրերի պլանավորման և իրականացման միջոցով, ինչպես նաև մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջարկման, և տարածաշրջանների նորարարական կարողությունների բարձրացման և օգտագործման միջոցով:

168. Վերոնշյալ շահագրգիռ կողմերից որոշները ուղղակի գործառույթներ կիրականացնեն ՏԶՌ առնչությամբ, որոշների դերը կլինի անուղղակի, այն է՝ հիմնականում կկատարեն իրենց սեփական առաջադրանքները մարզում: ՏԶՌ հաջողության բանալին լինելու է այս բոլոր դերակատարների միջև ամուր համագործակցության և լավ հաղորդակցության ապահովումը:

169. ՏԶՌ արդյունքները կանոնադրության առումով նվազագույն են և հիմնականում առնչվում են որոշակի փոքր ծառայությունների գնմանը (օրինակ՝ գնահատում), ինչպես նաև ներքին մոնիտորինգին, հաշվետվությանը և գնահատմանը, որոնք կարող են իրականացվել ՀՀ Շիրակի մարզպետարանի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջոցով:

IX. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

170. Տարածքային զարգացման ռազմավարության իրականացումը մոնիտորինգի կենթարկվի, կվերանայվի, և կգնահատվի համաձայն հետևյալ սկզբունքների՝

1) Պարբերական մոնիտորինգ և առաջընթացի գնահատում՝ տարածքային զարգացման ռազմավարության նպատակներին և գերակայություններին հասնելու ուղղությամբ:
2) ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզի վարչակազմերի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

171. Ստորև թվարկված կատարողական ցուցիչները չափում են ՄԶՌ նպատակներին հասնելը

1) աղքատության մակարդակ,
2) ակտիվ կազմակերպությունների թիվը,
3) մասնագիտական և բարձրագույն կրթությամբ մարդկանց թիվը,
4) ոչ գյուղատնտեսական աշխատատեղերում զբաղված մարդկանց թիվը,
5) երկարաժամկետ գործազրկության մակարդակ,
6) լեռնային, բարձր լեռնային և սահմանամերձ տարածքների երկարաժամկետ գործազրկության և աղքատության տեմպեր,
7) մարզային/տեղական զարգացմանը նվիրված վերապատրաստում անցած մարզային և համայնքային աշխատակիցների թիվը,
8) մարզի համայնքների թիվը,
9) մարզային և տեղական վարչակազմերի աշխատակիցների թիվը:

172. Այս ցուցիչները տարեկան կհաղորդվեն և կգնահատվեն մարզի վարչակազմի կողմից, և արդյունքները կներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ առաջընթացի զեկույցում:

173. ՄԶՌ-ն մոնիտորինգի կենթարկվի մարզի վարչակազմի կողմից՝ առաջընթացի և ՄԶՌ նպատակներին հասնելու առումով: Կատարողական ցուցիչների ցանկը (դրանք չափում են ռազմավարական նպատակներին հասնելը) պետք է մշակվի և ընդգրկվի տեքստում: Այս ցուցիչները պետք է գնահատվեն տարեկան առումով՝ մարզի վարչակազմի կողմից, և արդյունքները ներկայացվեն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՄԶՌ-ների առաջընթացի զեկույցում:

174. ՄԶՌ մոնիտորինգը կհամալրվի մանրամասն մոնիտորինգի համակարգով՝ առաջիկա 2018-2020 տարածքային զարգացման գործողությունների ծրագրում:

175. Ռիսկեր, ռիսկերի մոնիտորինգ և նվազեցում: Հետևյալ ռիսկերն են հայտնաբերվել ՄԶՌ-ների համար, որոնք արդեն իսկ ինտեգրված են փաստաթղթում, և/կամ/ կկիրառվեն ՄԶՌ գործընթացի իրականացման ժամանակ:

Ռիսկեր	Ռիսկերի նվազեցման
Համապատասխան մարդկային ռեսուրսների բացակայություն: Փորձառու և որակյալ աշխատակիցների բացակայություն՝ հատկապես համայնքային մակարդակով, որպես պոտենցիալ ռիսկեր,տեղական մակարդակում հաջող իրականացման համար: Տեղական ինքնակառավարման մարմինները հաճախ չունեն ռեսուրսներ և ունակություն վերցնելու նախաձեռնությունը ծրագրի, որը հետաքրքրություն ունի շահագրգիռ կողմերի և այլ տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտներում: Մարզային վարչակազմերի համակարգման ոչ բավարար կարողությունները կարող են լրացուցիչ խոչընդոտ հանդիսանալ գործընթացի համար:	Ընթացիկ վերապատրաստում և կարողությունների բարելավման պլանավորում՝ կոորդինացման և մարզպետարանի հմտությունների բարելավման համար, ինչպես նաև իրականացման հմտություններ՝ տարածքային և տեղական մակարդակներում:
Առանցքային հարցերի ընկալման բացակայություն՝ մարզային ադմինիստրացիաների և այլ շահագրգիռ	Դասընթաց մարզային վարչակազմի և ՏԶ շահագրգիռ կողմերի համար, որպեսզի ստեղծվի

կողմերի միջև:	բանիմաց համայնք՝ ռացիոնալ որոշում կայացնելու համար:
ՄԶՌ կարգավիճակի պարզաբանման բացակայություն և/կամ տարբեր իրականացման ընթացակարգեր, և պարտականություններ:	Իրագործելի ծրագրի մշակում, որը ենթակա է քաղաքական բանավեճի: Մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգերի մշակում՝ ՄԶՌ արդյունքների հրապարակման համար:
Անբավարար մոտիվացիան շահագրգիռ կողմերի ներգրավված լինելու: Որոշ դեպքերում որոշ շահագրգիռ կողմեր կարող են բողոքել, որ ծրագրի իրականացման ժամանակացույցն ենթակա չէ քաղաքական բանավեճի, կամ թափանցիկության պակաս կա ողջ գործընթացում:	Ներգրավելով շահագրգիռ կողմերին ՄԶՌ մշակման ամենավաղ փուլում և ամբողջ իրականացման փուլում:
Անարդյունավետ մոնիտորինգ՝ հստակ սահմանված կատարողական ցուցիչների բացակայության պատճառով:	Հստակ սահմանված և չափելի կատարողական ցուցիչներ:
Տարբեր շահագրգիռ խմբերի շահերի խթանում:	Ընդհանուր շահերի նույնականացում, շահագրգիռ կողմերի խրախուսում:
ՄԶՌ-ների դերի կարևորության ընկալումը հասարակության կողմից և ինչպես կարելի է այն կապվել իրենց առօրյա կյանքին:	Հանրային իրազեկության բարձրացում՝ դարձնելով ՄԶՌ-ն հայտնի փաստաթուղթ ընդհանուր հասարակության շրջանում, և հրապարակել հաջող տարածքային և տեղական ծրագրեր: Հրապարակայնությունը կոնկրետ ծրագրերի և նախաձեռնությունների կապված ՄԶՌ-ին կբարձրացնի իրազեկությունը և կխթանի դրական իմիջ:
ՄԶՌ-ն պետք է կարողանալ մատուցել, թե մարզային, և, թե տեղական մակարդակով: Հաջող ՄԶՌ-ն ապահովում է ճանապարհային քարտեզ մարզի հետագա զարգացման համար, ինչպես նաև ամբողջ վայրերի / համայնքների համար:	Կառուցել բավարար ճկունություն իրականացման մեջ և թույլ տալ, որ ավելի ցածր մակարդակներում ընդունեն այնպիսի մոտեցում, որը համապատասխանում է իրենց տեղական կարիքներին:

176. **ՄԶՌ-ի վերանայում:** ՄԶՌ-ի մեծ միջնաժամկետ վերանայումը տեղի կունենա 2021 թվականին (2017-2020թթ համար) և եթե պայմանները պահանջեն՝ ռազմավարությունը կթարմացվի, կճշգրտվի և կերկարաձգվի: Այս վերանայումը կիրականացվի մարզպետարանի կողմից, սերտորեն կվերահսկվի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից, որը կապահովի համապատասխան վերանայման մեթոդաբանություն և գործիքներ:

177. **ՄԶՌ գնահատում**: 2026 թվականին ՄԶՌ-ն կանցնի նախնական գնահատում: Եթե միջոցները հասանելի լինեն՝ կանցնի միջնաժամկետ գնահատում 2021 թվականին, կլինի նաև ՄԶՌ վերանայում: Գնահատումը կընդգրկի առնվազն հետևյալ չափորոշիչները՝

1) Արդյունավետություն: Արդյունավետության վերլուծությունն այն է, թե որքան հաջող է ՄԶՌ-ին հասել իր նպատակներին: **Այն կարելի է գնահատել ըստ հետևյալ հարցերի՝**

ա. որքանո՞վ են իրականացել նպատակները,
բ. որո՞նք են եղել (քանակական և որակական) ազդեցությունները,
գ. որքանո՞վ են նկատված ազդեցությունները համապատասխանում նպատակներին,
դ. որքանո՞վ կարող են այդ փոփոխությունները/ազդեցությունները ներառվել ՄԶՌ-ում,
ե. ի՞նչ գործոններ են ազդել նկատված ձեռքբերումների վրա,
զ. որքանո՞վ են տարբեր գործոններ ազդել նկատված ձեռքբերումների վրա:

2) Արդյունավորություն: Արդյունավորություն է համարվում օգտագործվող ռեսուրսների և փոփոխությունների առաջացած հարաբերությունը: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ են ծախսերը արդարացված,
բ. որքանո՞վ են ծախսերը համաչափ առավելությունների հասել,
գ. ի՞նչ գործոններ են ազդում որևէ կոնկրետ անհամապատասխանությունների վրա,
դ. որքանո՞վ է ՄԶՌ-ն եղել արդյունավետ ծախսերի առումով,
ե. կան արդյո՞ք ծախսերի (կամ օգուտների) էական տարբերություններ մարզերի միջև:
զ. ո՞րն է պատճառը:

3) Համընթացություն: Համընթացության գնահատումը ցույց է տալիս, թե որքան լավ են տարբեր գործողություններ միասին աշխատում: **Բնորոշ հարցեր՝**

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ մարզի այլ ռազմավարական նպատակներին,

բ. որքանո՞վ է ՄԶՌ-ն համահունչ Հայաստանի զարգացման քաղաքականության հետ:

4) Համապատասխանություն: Համապատասխանությունը ցույց է տալիս հասարակության կարիքների և խնդիրների միջև եղած հարաբերությունը: Կարելի է գնահատել հետևյալ հարցերով՝

ա. որքանո՞վ է ՄԶՌ-ն դեռ համապատասխան,

բ. որքանո՞վ են նպատակները համապատասխան ՄԶՌ-ին,

գ. որքանո՞վ են նպատակները (դեռ) համապատասխանում մարզի կարիքներին,

դ. որքա՞ն կարևոր է ՄԶՌ-ն մարզի բնակիչների համար:

X. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

178. **Ֆինանսական ռեսուրսներ**: ՄԶՌ-ով նախատեսվող ռազմավարական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ պետական և մարզի համայնքների բյուջեների (այդ թվում՝ ապագա տարածքային զարգացման ֆինանսավորման մեխանիզմի շրջանակներում, որը կստեղծվի 2017թ. և կիրականացվի սկսած 2018թ.), դոնորների և միջազգային ֆինանսական հաստատությունների, ոչ հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ֆինանսավորման միջոցները:

179. ՄԶՌ-ի համար անհրաժեշտ ֆինանսավորման ռեսուրսները և դրանց աղբյուրները կգնահատվեն 2018-2020թթ. առաջիկա տարածքային զարգացման գործառնական ծրագրի ներքո:

180. **Մարդկային ռեսուրսներ**: ՄԶՌ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կառուցել ժամանակակից և արդյունավետ հանրային կառավարում, կամ ինստիտուտների համակարգ, որը միասին կտանի կայուն մարզային զարգացման: Մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության և հանրային կառավարման միջև բարելավված համակարգումը, ոլորտների միջև համակարգումը և խորհրդատվությունը նախապայման է կայուն զարգացման համար:

181. ՀՀ Շիրակի մարզպետարանն ունի՝ 164 աշխատակիցներ՝ որից 154-ը ունեն բարձրագույն կրթություն (93.9%).

182. Մարզի համայնքապետարաններն ունեն՝ 1430 աշխատակիցներ՝ որից 550-ը ունեն բարձրագույն կրթություն (38.5%).

183. Մարզերը և ՏԿԶՆ-ն շահում են ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող՝ <<Աջակցություն ՏԿԶՆ-ին, աջակցություն ՏԶ գործընթացներին>> ծրագրից (2013-2017), որը վերջանում է 2017 թվականի հուլիսին: Նախատեսվում է հետագա աջակցություն: Մարդկային ռեսուրսները՝ պատասխանատու ՄԶՌ-ի համակարգման, մոնիտորինիգի, հաշվետվության համար, հետագայում կաջակցվեն կարողությունների զարգացման ինտենսիվ ծրագրով:

184. **Տեխնիկական և կազմակերպչական հարցեր**: ՄԶՌ իրականացումը չի պահանջում մեծ տեխնիկական փոփոխություններ կամ ներդրումներ, ինչպես նաև մեծ կազմակերպչական ադապտացիա: ՄԶՌ-ն կարող է իրականացվել առկա ինստիտուցիոնալ և տեխնիկական հագեցվածությամբ: